

10833

Handwritten text in Cyrillic script, possibly a title or author name.

Handwritten text in Cyrillic script, possibly a subtitle or additional information.

003
2-24

1913


1500 - 400


ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ

ՏՈՂԸ

ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈԿԱԾ

ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏՈՒՄԻ ՀԱՅ ԳՐ
ԳԵՂԱՐԷՍՏԱԿԱՆ






ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Խմբագրեցին—Ապրեսիան Աբէլ,
 Ապրանեսիան Ս. քահանայ, Բուն-
 եաթեան Աստրիլ, Դամարեան Ս.,
 Մկրտումեան Գ. քահանայ, Քար-
 տաշեան Գ. քահանայ:



Տպարան
 Ապրեսիան և Օկուբ ընկ.
 Աստրախան

1913





1379-48+

Աստրախանի հայ Գրական-Գեղարեստական ընկերութեան ներկայ վարչութիւնը, ինրկասի ունենալով հայոց տառերի գիւտի 1500 ամեակը և հայ տպագրութեան 400 ամեակը, ի պատիւ այդ մեծ տօների, որոշեց կազմակերպել մի մեծ յօբելիանական հանդէս ներկայ հոկտեմբեր 19 ին:

Միաժամանակ որոշեց հրատարակել այդ յօբելիաններին նւիրւած մի գրական ժողովածու, որտեղ բացի տօնին վերաբերւած յօդւածներից և պատկերներից, կան նաև տեղական հայ կուլտուրական հաստատութիւնների մասին համառօտ տեղեկութիւններ, իրենց պատկերներով:

Վարչութիւնս իրեն բարոյապէս բաւարարւած կզգայ, եթէ ներկայ հրատարակութիւնը կտարածւի մեր հասարակութեան լայն խաւերում, որով և միջոց աւած կլինի մեզ, մեր փոքրիկ լուծան ևս ունենալու այդ մեծ յօբելիանների յաւերժացման գործում:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ:



Ս. ՄԵՍՐՈՊԸ

1.

«Մանկանացու ծնեալ՝ զիւրն
անմահ յիշատակ հիթող»:
Պորենացի

Հայոց տառերը գտաւ ս. Մեսրոպ Մաշտոցը:

Նա ծնեց Տարօն Գաւառի (այժմեան Էրզրումի) Հացեկաց գիւղում: Ծննդեան թւականը յայտնի չէ: Հօր անունն է Վարդան, որը մի բարեպաշտ մարդ էր: Թէև գիւղացու զաւակ, բայց նա անկերթ չմնաց, մանուկ հասակում սովորեց տառի, պարսիկ և յոյն լեզուները: Նա Մեծ Ներսէս կաթողիկոսի աշակերտներից մէկն է համարուում և կարծուում է, որ Ներսէսի բացած դպրոցում ստացաւ Մեսրոպը իր մանկական կրթութիւնը:

Ուսումն աւարտելով, նա գնաց Արարատեան նահանգը և հայոց Պատրիարք թագաւորի օրով (396—399) սրա պալատում զինւորական ծառայութեան մտաւ:

Այդտեղ նա այնքան առաջադիմութիւն ցոյց տուց, որ Ներսէսի մահից յետ թագաւորի զիւանի գրագիր նշանակեց: Այդ ակնաւոր պաշտօնում նա մնաց եօթ տարի, բայց պալատի կեանքը չգրաւեց նրան. ուստի թողեց իր պաշտօնը, կրօնաւոր դարձաւ և վանք մտաւ:

Վանքում Մեսրոպը ճգնաւորի կեանքով շապրեց, այլ շատ աշակերտներ ժողովեց իւր շուրջը և նրանց հետ մտաւ ժողովրդի մէջ, Աւետարանն ու Ասուածաշունչը քարոզելու, բացատրելու և ժողովրդին քրիստոնէական ուսմունքի մէջ վարժելու:

Առաջին անգամ նա գնաց Գողթան և Սիւնեաց գաւառները (այժմեան Մեղրիի և Ղարաբաղի շրջանները):

Այդ տեղերում ժողովուրդը կոպիտ, վայրենաբարոյ էր և գեռ հին հեթանոսական ասանդութիւններով էր սպրում: Նրա քարոզութիւնը այդ շրջաններում յաջողութիւն չունեցաւ, որովհետև ամեն տեղ եկեղեցիներում, վանքերում հրդեհողութիւնն ու ս. Գրքի ընթերցանութիւնը կատարուում էր յունական և տարի լեզուներով և հայ ժողովուրդը ոչինչ չէր հասկանում: Մեսրոպը ստիպւած էր մի ծանր աշխատանք

կատարել. նա կարգում էր ս. Գիրքը յունարէն, ասորերէն և նորից թարգմանում էր ժողովրդին հայերէն. իսկ այն տեղերում, ուր լեզուազէտ շոգեորականների չկային, ժողովուրդը մնում էր հասկանալու կարողութիւնից զուրկ և անմիթար: Որպէս զի գծարութիւնները հարթէ, Մեսրոպը մինչև անգամ տեղական իշխանի մարմնաւոր սյծին զիմեց և ստիպմունքով հարկադրեց ժողովրդին, իր ասածներն ընդունել և կատարել, սակայն գծարութիւնները դարձեալ գծարութիւն մնացին: Ահա այդ ծանր գրութիւնը և կորչելու վտանգը ստիպեցին Մեսրոպին մի կլք գտնել: Միակ կլքը հայոց տառերն էին: Նա մտածեց հայոց տառեր գտնել, որպէս զի ամենքը հայ գիր կարդան. հայերէն խօսան և հասկանան: Իր նոր մտքով ողորւած՝ Մեսրոպը թողեց գործը և շտապով եկաւ Վաղարշապատ, իր միտքը յայտնելու ժամանակի դարգացած, լուսամիտ ս. Սահակ կաթողիկոսին: Սահակը սիրով ընդունեց Մեսրոպին, իսկոյն ժողով գումարեց, ընդհանուր խորհրդակցութեամբ գլուխ բերելու այդ մեծ գործը:

Իրանց միացաւ ժամանակակից ուսումնասէր Վասիլապուհ թագաւորը: Նա ժողովում հաղորդեց, թէ ինքը Հաբէլ անունով մի քահանայից լսել է, որ Դանիէլ ասորի եպիսկոպոսի մօտ գտնուում են հայոց տառեր: Իսկոյն ժողովականների խնդրով թագաւորի մերձաւոր Վահրիճ իշխանը ուղարկուում է Միջագետք, որը այնտեղից Հաբէլ քահանայի հետ գնում է Դանիէլ եպիսկոպոսի մօտ և նրանից վերցնելով՝ բերում է հայոց տառերը Հայաստան, որոնք թւով 22-էին և կոչուում են Դանիէլեան տառեր: Մեծ ցնծութեամբ են ընդունուում հայոց տառերը մեր հայրենիքում: Իսկոյն բացուում են ուսումնարաններ, երեխաներ են հաւաքում և սկսում են մայրենի խօսքը սովորեցնել:

Առաջին հայ ուսուցիչը ինքը՝ Մեսրոպն է. նա արդէն վարդապետ է դարձել և գրաւած պարապումէ հայ աշակերտների հետ: Այսպէս շարունակ երկու տարի պարապում է առաջին հայ վարժապետը, բայց բոլորովին անօգուտ: Նա փորձով համոզուում է, որ այդ տառերը հայ լեզուի հնչիւններին համապատասխան չեն և տառերը կիսատ են, բոլորը չեն. իսկ պակասը լրացնելու համար իր հայրենիքում ոչ ինքն ոյժ ունի և ոչ կաթողիկոսը: Նա չյուսահատեց այդ արգելքի առաջ, վերցրեց իր ընդունակ աշակերտներից մի քանիսին և այս անգամ ինքը գնաց Միջագետք Դանիէլի մօտ, գուցէ պակաս տառերը նրա մօտ գտնելու: Սահակը և Վասիլապուհ թագաւորը մեծ յոյսերով, շուրք համբոյրներով՝ նրան ճանապարհ են դնում:

Դանիէլը ոչնչով չկարողացաւ օգնել Մեսրոպին: Մեսրոպը խիստ տրամեց այդ անյաջողութեան առիթով, բայց որպէս զի իր ճանապարհորդութիւնը զուր չանցնէր, նա գրապեց աշակերտների կրթութեան հոգսերով: Մեսրոպը նրանց երկու խմբի բաժանեց և թողեց այնտեղ, որ մի խումբը վարժւի ասորի գրականութեանը, միւսը՝ յոյն լեզուին. իսկ ինքը վերցնելով նրանցից աւելի աւագներին—Յովհանն եկեղեցացուն և Յովսէփ Պահնացուն, ուղևորեց ժամանակակից գիտնական լեզուագէտների, ճարտասանների մօտ, իր մտադրութիւնը իրագործելու—նրանց օգնութեամբ հայոց տառերը գտնելու: Նա գնաց Եդեսիա, Արտամեա քաղաքները՝ Պոստոսի մօտ, Փիւնիկէ՝ Սամոսատ, Հուսփանոսի մօտ. բայց ոչ ոք չկարողացաւ մեծ վարժապետի ցաւն դարման անել:

Այսպէս Մեսրոպը մարդկանցից յոյսը կտրած՝ իր

ոյժերին է ապաւինում և յոյսը դնում է Աստուծոյ վրա: Եւ մի անգամ երբ նա կենդրոնացած էր իր գրադմունքների մէջ, մեր պատմիչները աւանդում են, որ նա մտքերով յափշտակւած՝ տեսիլ տեսաւ, որի ժամանակ մի անհրկոյթ ձեռքի թաթ, քարի վրա գրում էր հայոց այբուբէնը:

Մեսրոպը իսկոյն դիմում է Հուսիֆանոսին, որ ազգով յոյն էր և հմուտ գծագրող և իր մտքում տպաւորւած տառերի ձևը յայտնում է նրան: Հուսիֆանոսը Մեսրոպի հետ միասին գրի են աւնում տառերը, յարմար ձևեր են տալիս նրանց և այսպէս արդէն պատրաստ է մեծ գիւտը:

Մեսրոպը փորձելու համար՝ առաջին անգամ նոր տառերով թարգմանում է Աստուածաշնչից Սօղոմոնի առակների գիրքը: Այդ առակների առաջին գլխի առաջին տողը սկսւում է այսպէս.

«Ճանաչել զմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Ահա այդ խօսքերն էին, որ առաջին անգամ թղթի վրա հայ լեզուով և հայ տառերով գրեցան:

Մեսրոպը երբ նկատում է, որ թարգմանութիւնը յաջող է և իր տանջանքները պսակեցան մեծ յաջողութեամբ, իր գիւտի վրա ուրախացած՝ վերագոհնում է Հայաստան:

Վոսաճապուհ թագաւորը, ս. Սահակ կաթողիկոսը երբ լսում են այդ ուրախ լուրը, նախարարների, աւագների, հոգևորականների մեծ բազմութեամբ դիմաւորում են Մեսրոպին Ռահ գետի ափին. ցնծութեան աղաղակներով և երգերով վերագոհնում են Վաղարշապատ մայրաքաղաքը, ուր մի քանի օր շարունակ քաղաքացիները ուրախութեան տօն են կատարում հայոց նշանագրերը գտնելու առիթով: Մեր տառերը գտնեցան 404 թւին ոմանք էլ ասում են 412 թւին:

Մեսրոպը հնարեց հետևեալ տաննչօրս տառերը. ը, ժ, յ, ի, ժ, հ, ձ, ճ, յ, չ, ջ, վ, ը, ց:

Այնուհետև հայոց թագաւորը կաթողիկոսի հաւանութեամբ հրաման հանեց՝ ամեն տեղ ուսումնարաններ բանալ, մանուկներ ժողովել հայ լեզուով կարգալ, գրել վարժելու և ասորերէն ու յունարէն գրած գրքերը հայերէն փոխադրելու: Այդպիսով սկսւում է մի վերին աստիճանի եռանդուն գործունէութիւն:

Առաջ են գալիս մի շարք պատրաստած մարգիկ, որոնք գրադում են օտար լեզուներից հարկաւոր գրքեր թարգմանելով:

Դրանք Մեսրոպի և Սահակի զպրոցից աւարտած աշակերտներն են, որոնց ընդունակութիւնը, շնորհքը տեսնելով, մեծ վարժապետները ուղարկում են այդ ժամանակաւ ուսման յայտնի կենդրոնները՝ Աթէնք, Աղեքսանդրիա, Հռովմ, Բիւզանդիոն, կատարելագործելու, որոնք և վերագործան Հայաստան և օգնեցին իրենց վարժապետների մեծ գործին, դառնալով ուսուցիչ, քահանայ, վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս և ջանք գործ գրին իրենց խաւար հայրենիքը լուսաւորելու: Դրանք ընդհանուր անունով կոչեցան «Թարգմանիչներ». թէև ունեցան իրենց ինքնուրոյն գրածքներն ևս:

Այդ թարգմանիչները երկու կարգի են բաժանուում: Առաջին կարգի նրանք են, որոնք հայոց տառերը գտնած օրերին, արդէն հասակաւոր մարդիկ էին և թարգմանութիւնների ժամանակ Սահակ, Մեսրոպին գործակից էին, օգնում էին նրանց: Երկրորդ կարգի

նրանք էին, որոնք ուսումը աւարտելուց յետ, օտար քաղաքներ ուղարկեցան իրենց ուսումը կատարելագործելու և Հայաստան վերագործան, երբ արդէն իրենց մեծ վարժապետները վախճանել էին:

Առաջին կարգիներից իրենց գործունէութեամբ անուն վաստակեցին—Յովսէփ Վայոց Ձորեցի, Յովհան, Ղևոնդ Երէց, Եղիշիկ, Կսրիւն, Մուշէ, Տիրայր, Յովսէփ Պահնայցի, Յովհան Եկեղեցացի, Երեմիա, Սահակի սարկաւազապետը, Թաթիկ, Արձան և Ադան Արծրունիներ. Ղազարիկ:

Երկրորդ կարգիներից են—Մովսէս Խորենացի, սրա եզրայրը Մամբրէ Վերծանող, Գաւիթ Անյաղթ, Գիւա, Յովհան Մանգակունի, Եղիշէ, Ղազար Փարբեցի, Եզրաս Անգեղացի, Սահակ, Յովհաննէս և այլն:

Մեսրոպը գրանով չբաւականացաւ: Նա մի շրջիկ վերահսկողի դեր յանձն առաւ: Այնուհետև սկսաւ շրջիկ հայոց աշխարհի գանազան կողմերը, մութ անկիւնները, վերահսկելու եղած ուսումնարաններին, չեղած տեղերում նորերը բացելու: Նա մտաւ Գողթան, Սիւնեաց, Արցախ աշխարհները, որոնք գտնւում էին Հայաստանի հիւսիս և արևելեան սահմաններում և ամեն տեղ գրադիտութիւն, լոյս տարածեց: Հայերի վերածնման գործը առանց նկատելու չմնաց մեր պատմական հարեաններից: Վրացիներն ու աղւանները իրենց իշխանների միջոցով դիմեցին Մեսրոպին և սա վրացիների ու աղւանների համար էլ տառեր գտաւ, թարգմանութիւններ արեց և նրանց լուսաւորութեան գործին էլ օգնեց:

Մեսրոպը նաև կարգի բերեց մեր եկեղեցում անհրաժեշտ գործադրող գրքերից մէկը—ծիսարանը, որի վրա կատարւում են մեր եկեղեցական անհրաժեշտ ծիսակատարութիւնները, մկրտութիւն, պսակ, թաղումն և այլն և այդ գիրքը նրա անունով կոչւում է «Մաշտոց»:

Այս բոլոր մեծագործութիւնների համար երախտապարտ հայ ժողովուրդը Մեսրոպին սուրբ անունը տեց և հայոց եկեղեցին նրա պատկերը իր սուրբերի պատկերների շարքում դասեց և մինչև անգամ առանձին տօն կարգեց, որ կատարւում ենք յունիս ամսին շս. Սահակ և Մեսրոպ թարգմանիչներ» անունով. իսկ նրանց աշակերտների տօնը կատարւում ենք հոկտեմբեր ամսին, «Թարգմանիչ վարդապետներ» անունով:

Մեսրոպը Հայաստանի լուսաւորութեան գործին այդքան զարկ տալուց յետոյ, իր կեանքի վերջին տարիներում կաթողիկոսութեան ևս արժանացաւ: Այդ եղաւ այն ժամանակ, երբ 438 թւին ս. Սահակը վախճանեց: Սակայն այդ երկար շտակեց: Սահակի մահից յետ միայն 6 ամիս Մեսրոպը տեղակալ մնաց կաթողիկոսական գահի վրա և վախճանեց Վաղարշապատում, մեծեկան (փետրւար) ամսի 13 ին:

Նրան ուղեցին մայրաքաղաքում թաղել, բայց Մեսրոպի բարեկամ Վահան Ամատունին, նրա աճիւնը իբրև թանկագին աւանդ, տարաւ և թաղեց իր սեպհական Օշական գիւղում, որը գտնւում է Երևանեան նահանգում, էջմիածնի մօտ:

Ս. Մեսրոպի գերեզմանը ուխտատեղի է դարձել հայ ժողովրդի համար: Ամեն տարի թարգմանիչների տօնին ժողովրդի մեծ բազմութիւն, էջմիածնի ճեմարանի աշակերտները և միաբանութիւնը գնում են ս. Մեսրոպի գերեզմանին այցելութիւն:

Եւ այսպէս մեծ ուսուցչի և մեծ հայր յիշատակը անմոռաց է դեռ 1500 տարիներ շարունակ:



Ս. Ս Ա Հ Ա Կ

II.

Ս. Սահակը հայոց մեծագործ կաթողիկոսներից մէկն է: Նա Ներսէս Մեծի որդին է, Լուսաւորչի թոռան ծոռը և Լուսաւորչի տան վերջին ժառանգը: Սահակը իր ուսումը ստացաւ Կեսարիայում և Կ. Պօլսում: Նա լաւ ուսումնասիրել էր յունաց, պարսից լեզուները. հմուտ աստուածաբան էր և գիտակ հայկաբան: Միևնոյն ժամանակ օրինակելի վարք ու բարք ունէր: Նա զեռ աշխարհական ժամանակ ամուսնացաւ և արուզաւակ չունեցաւ, որ կաթողիկոսական դահը ժառանգէր: Նա միայն մի դուստր ունէր Սահականոյշ անունով, որին ամուսնացրից հայոց սպարապետ Համազասպ Մամիկոնեանի հետ, որպիսի ամուսնութիւնից ծնեցան Վարդան, Հմայեակ և Համազասպ Մամիկոնեանները (Վարդանանց պատերազմի հերոսները):

Ասպուրակէս աննշան կաթողիկոսի մահից յետոյ, ամենքի ուշադրութիւնը կենդրոնացաւ ս. Սահակի վրա և հայ ազգի ու Պարսկական—Հայաստանի թագաւոր Սոսրով Գ-ի հաւանութեամբ ս. Սահակը ընտրուեց կաթողիկոս (389—439):

Ս. Սահակը կաթողիկոսական գահը բարձրացաւ շատ անյաջող ժամանակ: Հայաստանը քաղաքական խիստ աղմկալի վիճակումն էր: Յոյներն ու պարսիկները, իւրաքանչիւրն իրենց կողմից, աշխատում էին Հայաստանին տէր դառնալ, ուստի աշխատում էին երկպառակութիւններ առաջացնել մեր թոյլ, անաջող թագաւորների և անհնազանդ նախարարների մէջ, որպէս զի ներքին խռովութիւնների միջոցով իրենց նպատակին հասնեն:

Ս. Սահակը փորձեց վերջ տալ այդ ազգակործան երկպառակութիւններին, սակայն անյաջող, մինչև այն տեղը հասաւ, որ պարսիկները հեռացրին նրան կաթողիկոսական աթոռից:

Մեր նպատակից դուրս լինելով այդ ժամանակի քաղաքական պատմութիւնը անել, ուստի ի նկատի կունենանք Սահակի միայն կաթողիկոսական գործունէութիւնը: Նա որպէս կաթողիկոս մեծ ջանքեր գործ դրեց—բարեկարգեց եկեղեցիները, նոր վանքեր, եկեղեցիներ շինեց, վերանորոգեց Հռիփսիմէի տաճարը որ պարսից Շապուհ թագաւորը քանդել էր տել: Բացի դրանից՝ իր հօտը այդպիսի անհաշտ թշնամիներից

ազատելու համար, նա Վաղարշապատում մի ժողով գումարեց և կանոններ հաստատեց, որ այդ կանոններով հայ հոգևորականները զեկավարեն իրենց հօտը: Գաւառների և գիւղերի համար տեսուչներ և առաջնորդներ կարգեց, քորեպիսկոպոս անուանով:

Իրանց պարտականութիւնն էր ժողովրդին խրատել, մեղաւորներին և մոլորւածներին դարձի բերել:

Ս. Սահակը ամենամեծ ծառայութիւն արեց նրանով, որ նա գործակից եղաւ Մեսրոպին՝ տառեր գրտնելիս և Վրամշապուհ ուսումնասէր թագաւորի հետ հայ աշխարհը ուսումնարանների ցանցով պատեց ու զրանցից աւարտած ընդունակ աշակերտներին արտասանման ուղարկեց լեզւարանութեան և գիտութիւնների մէջ կատարելագործելու, որոնք վերագործան Հայաստան և իրենք ևս մի մի լուսատու ճրագներ դարձան:

Ս. Սահակի գնահատելի և անմոռաց գործերից մէկն է նաև Աստուածաշնչի թարգմանութիւնը:

Ս. Գրքի առաջին թարգմանութիւնը կատարեցաւ ասորերէն բնագրից ս. Մեսրոպի և իր աշակերտների ձեռքով:

Այդ թարգմանութիւնը թերութիւններ ունէր, ուստի կարիք զգացեց երկրորդ անգամ թարգմանել յունարէն «Եօթանասնից» թարգմանած օրինակից. ուստի ամենրի աչքը դարձաւ դէպի Սահակը:

Նրա մօտ ժողովեցան Վրամշապուհը, նախարարներն ու հոգևորականները և թախանձագին խճուղիցին Սահակին, որ իբրև յունարէն լեզուի մէջ խիստ հմուտ, ձեռնարկէ այդ թարգմանութեանը: Ի միջի այլոց ժողովականները ասացին նրան. «Այդպիսի մեծ գործին Հայաստանում ոչ ոք չէ կարող ձեռնարկել»:

Սահակը սիրով յանձն առաւ նրանց խնդիրը կատարել: Նա ամբողջ Աստուածաշունչը յունարէնից թարգմանեց հայերէն, անպատմելի դժուարութիւնների յաղթելով:

Այդ թարգմանութիւնը կատարւած է այնքան յաջող, որ յետագայ սերունդները մինչև այսօր զարմանում են նրա հարազատութեան վրա:

Օտարներն անգամ, երբ կարիք է լինում համեմատելու Աստուածաշունչը, ինկատի են տանում հայերէնը, որովհետև այդ «Եօթանասնից» կոչւած յունարէն օրինակը չկայ, կարծւում է, որ կորած է: Մի խօսքով՝ Սահակի թարգմանած Աստուածաշունչը համարւում է թարգմանութիւնների մայրը:

Բացի ս. Գրքից, ս. Սահակը թարգմանեց ս. հայրերի ընտիր մեկնութիւններից շատերը:

Ս. Սահակը մեռաւ խորին ձերբութեան մէջ 439 թվի սեպտեմբերի 7 ին, ուղիղ իր ծննդեան օրը, Բագրևանդ զաւառի Բլուր գիւղում, 51 տարի կառավարելով կաթողիկոսական աթոռը: Նա վախճանեց ամենախաղաղ մահով և աղօթելով: Երանելու վերջին խօսքն էր. «Տէր Յիսուս, ընդունիր իմ հոգին»:

Նա խից իր աչքերը աշակերտների և սիրելիների շրջանում, որոնց թւում էր և նրա թոռն Վահան Մամիկոնեանի կինը՝ Դուսար:

Նրա մահան լուրը տարածւելուն պէս, Հայաստանի բոլոր գաւառներից մարդիկ ժողովեցան, յազմաշխառ հովազեաթի մարմինը մեծ հանդէսով տեղափոխեցին Տարօն գաւառի Աշտիշառ գիւղը, ուր եկեղեցու մէջ և թաղեցին նրա աճիւնը:

Որովհետև Սահակը արու ժառանգ չունէր, ուստի իր հայրական կալւածքները կտակեց իր սիրելի թոռներին՝ Վարդանին և նրա եղբայրներին ու այսպիսով հռչակաւոր Աշտիշառ գիւղը, որ Լուսաւորչի տան

ժառանգական սեպհականութիւնն էր, անցաւ Մամիկոնեանսերի ձեռքը: Անն այս մեծ մարդու մասին է, որ գրում է մեր պատմարան Պորենացին. «Մանկանացու ծնեալ՝ զիւրն անմահ յիշատակ եթող» (մահ-

կանացու ծնեց անմահ յիշատակ թողեց): Թող օրհնել անմահի յիշատակը:

ԳԷՈՐԳ ԳԱՀ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

1 հոկտ.



Օշական. Ս. Մկրտոյի գերեզմանը

Օ Շ Ա Կ Ա Ն

Վաղարշապատից գեղի հիւսիս, ետքը վերստ հեռաւորութեան վրա, բարձրադիր, բարբարոս ժայռերի ծոցում, կանաչազարդ աշգիւնների մէջ թաղւած է պատմական հինաւորց Օշականը:

Օշականը սեպհականութիւն դարձաւ Ամատունաց Վանան իշխանի, որը բաշխեց նրան Տրդատ թագաւորի որդի Պոսրով Ա-ը Վանանի պատերազմական յաղթութիւնների համար, որ նա սարաւ Մաղքթաց Սանհասն թագաւորի վրա, ազատելով Հայաստանը վերահաս վտանգից:

Ներկայումս Օշականը էջմիածնապատկան գիւղերից մինն է: Օշականի ճանապարհը քարքարոտ սաւաղարներից է կազմւած և էջմիածնից մինչև Պաթուհարի հայաբնակ գիւղը հարթ, հաւասար ճանապարհ է ներկայացնում բայց սկսած Արդար-Դաւիթ քեաւաֆէլից (աւերած կիկոյեցի) ճանապարհը մինչև Օշական քարակոյտերի միջով անցնելով՝ շարունակ բարձրանում է, հրը ձեր առաջ բացւում է սարահարթ, որից յետոյ երևում է Օշականը Մինչև Պրիմեան Հայրիկ, կարելի էր գնալ Օշական միմիայն թամբած ձիով կամ ոտով: Պրիմեան Հայրիկը այդ գժւարութիւնը վերացնելու համար նրամայեց շինել կառքերի համար խճուղի:

Երբ հասնում էք այն սարահարթի գլուխը, ուր ձեր առաջ երևում է Օշականը, դուք պէտք է ամենայն զգուշութեամբ ցած գաք Պրամ կոչւած ձորով, որ մտնէք գիւղը: Զարմանալի գիւրք ունի Օշականը:

Գիւղը մանկուց յետոյ, նորից պէտք է ոլորապատյո ճանապարհներով բարձրանաք և հիւսիս արևմտեան կողմով իջնէք դիւղի մէջ:

Քառախ պետք, որ հասում է խոր ձորի միջով գիւղը երկու մասի է բաժանում:

Այդպէս բլուրների լանջերի վրա ընկած Օշականը ունի մօտ 350 տուն հայ բնակիչ, որոնք պարապում են այգեկործութեամբ և երկրագործութեամբ: Աշխատութիւնը բնակիչների մեծագոյն մասի անբաժան ընկերն է: Ունի ծխական երկսես դպրոց, բայց համատարած տգիտութիւնը դեռ թագաւորում է: Անն այդ անշուք, բայց զուտ հայաբնակ գիւղում է այժմ հանգչում մեզանից 1500 տարի առաջ հայերէնի այբուբենը հնարող մեծ Մկրտոյի աճիւնը:

Գերեզմանը բոլորովին անշքացել էր, երբ աղգիս մեծագործ Գէորգ Վ կաթուղիկոսը 1879 թւին վերանորոգեց կիկոյեցին և նրամայեց գերեզմանը կարգի բերել:

Այդ նւիրական գերեզմանը շրջակայ հայ գիւղերի, ինչպէս և բոլորիս համար, ուխտատեղի է, որ ամեն մի այցելու հայի սրտում դարթեցնում է մեր նախնեաց անցեալ փառքի յիշատակները:

Ա. ԲՈՒՆԵԱԹԵԱՆՑ



ՄԻ ՕՐԻՆԱԿ ՀԱՅ ԱՆԴՐԱՆԻԿ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿԵՂԵՂԻՆ՝ ասելով Սաղմոս.
 Ազազակ. ժամանակուն շարակ
 Սղմոս Տրիզաւրու թեքում.
 Ընթեքց ուած իճն ընդոց:
 Կասաց անարասց ուք
 Մարդ րսա պատկերի մերում. և
 րստ նմանութե: և ի յիւեացե ձկ
 անց ծովու և թուչ նոց երկնից և
 անմանասնոց յերկրի և անսող նոց
 որ սողին ի վերա երկրի.
 Եւարար անզ ճարդն. ի պատկե
 րիւր. րստ պատկերի անարար ր
 զնայ. արու և եգարար զնուայ:
 Դարձեալ: իճն ընդոց:



պատկանելու

Արդար դպրի տպագրած Սաղմոսի մէկ էջը

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԶՈՐՍ ՀԱՐԻԻՐ ԱՄԵԱԿԸ

Ազգերի առաջադիմութիւնը առաջ մղող խոշոր գործօններից մէկն է եղել և է տպագրութիւնը:

Ամենահին ժամանակներից սկսած մարդկութիւնը իր աածը, լսածը և պատմածը գիտէր իր տեսակի գրի առնել և այնպէս յայտնել ուրիշներին: Սուրբ գրքից գիտենք, որ Մովսէս մարգարէն տասնարանայ պատուիրանները քանդակեց երկու քարեղէն տախտակներին վրա: Քարէ կամ կաւէ տախտակի վրա փորագրում էին երկաթէ ձողիկներով ցանկալի խօսքեր, դարձւացքներ:

Զորս հազար տարի առաջ եգիպտացիներն ամբողջ պատմութիւններ և աւանդութիւններ էին փորագրում իրենց բուրդերի պատերի վրա: Կաւէ տախտակներից յետոյ սկսեցին գրել պապիրուսի և տպագրութի վրա:

Տախտակի վրա փորագրւած տտեր կային, պապիրուսի և մագաղաթի վրա գծագրւած նշաններ և պատկերներ գոյութիւն ունէին, սակայն շարժական անել նրանց, այսինքն ժողովել ի մի և ցանկացած խօսքը շարելուց և տպելուց յետոյ, ցրել և նոր բառ ժողովելը պատկանումէ մի մարդու, որի անունը հրճւանքով յիշուածէ ցայժմ և անմոռաց պիտի մնայ դարերի ընթացքում:

Այդ մարդու անունն է Եօհան Գուտտենբերգը: Գերմանական Մայնց քաղաքի մի համեստ արհեստաւոր Գուտտենբերգը 1455 թւին շատ փորձերից ու տանջանքներից յետ, իր հնարած միջոցներով տպեց և լոյս հանեց մի մեծ գիրք—Աստուածաշունչը:

Եւ անն 1455 թւից գերմանական Մայնց քաղաքից ծագած լոյսը մեծացաւ, սփռւեց, տարածւեց աշխարհիս երեսին և լուսաւորեց ամենայնտին, ամենամութ խորշերը, ամենախուլ անկիւններն անգամ:

Ի՞նչու այսպէս: Պատճառն այն է, որ ձեռքով գրւած գրքերը սակաւաթիւ էին լինում, ուստի և թանկարժէք և մասշնի միայն հարուստներին և փառաւորներին:

Գուտտենբերգի գիւտը եկաւ լրացնելու այդ մեծ բացը, նա էժամացրեց գիրքը, ժողովրդականացրեց և տարածեց աշխարհի ամեն ծայրերում:

Մարդկութեան մէջ հաստատուեց մտքի հեշտ և արագ տարածումն ու հարստացումը թիւեր:

Եւ անն համաշխարհային այդ մեծ օրից հազիւ կէս դար անցած՝ 1512 թւին Իտալիայի Վենետիկ քաղաքում երևաց հայ տառերով տպագրւած առաջին գիրքը. նրա անունն էր—Պարզատուճար:

Իսկ մի հրաշք էր:

Համաշխարհային մեծ գիւտից յետ, քաղաքակրթութեան և լուսաւորութեան փայլուն արտայայտիչը—տպագրութիւնն երևան գալուց 57 տարի անցած՝ հայ ազգը ունեցաւ իր լեզուով տպագրւած գիրք: Սակայն ինտրիկն ոչ Հայաստանում, ոչ իր մտքի ծոցում, և այդ հասկանալի է:

Ի՞նչ էր ներկայացնում իրանից հայ կեանքը:

Հազար տարի էր, ինչ որ թափուում էր հայի արևներ—գրում է Լէօն—թափում էին ոչ այն պատճառով, որ նա անհանգիստ էր, արշուաւէր էր,—այլ այն պատճառով, որ նա չափազանց անօգնական էր—անտէր էր: Սկզբում հային կոտորում էր պարսիկը, ապա նրան յաջորդեց արաբը, ապա մօնղոլները, մամեկիւկները, թուրքմենները և այլն:

«Ալիսալան, Չինգիսխան, Հուլաղու, Լենկթեմուր... անա անուններ, որոնք դարեր շարունակ նւաճեցին, թուլացրին. արեան գետեր հոսեցրին հայ հողի վրայով»:

Այդ սոսկալի ժամանակներում կարելի էր մտածել գրականութեան և տպագրութեան մասին:

Տեղ տեղ վանքերում այս կամ այն վարդապետը աղօտ լոյսի տակ շտապ գրի էր անցնում իր տեսածը և այդ կազմումէր գրականութիւն:

Գիրքը, գրականութիւնը մահւան էր դատապարտւած, ճգնաժամի մէջ էր: Օգնութեան ձեռք մեկնեց Իտալիան, որ մի փայլուն ճրագ էր տպագրութեան արեւստում ամբողջ Եւրոպայի համար:

Դեռ Ռուբինեան հարստութեան ժամանակ վենետիկցին Կիլիկիա էր գալիս վաճառականութիւն անելու, իսկ կիլիկեացին Վենետիկ էր գնում նոյն նպատակով:

Եւ այնպիսի սերտ յարաբերութիւն սկսեց այդ երկու ազգերի մէջ, որ Վենետիկում մի վենետիկցու գումարով մի շէնք կառուցեց «Հայոց տուն» անունով, ուր ամեն կողմից եկած հայեր կարող էին պատասպարել և հանգիստ գտնել:

Եւ անն այդտեղ եկող, գնացող հայերն էին անշուշտ—ասում է Լէօն—որ օգնեցին Վենետիկ արհեստագէտներին փորագրել և տպագրել հարկաւոր գրքեր:

Իւրաքանչիւր ազգ պարծանքով է յիշում իր առաջին տպագրչի անունը, տարաբախտաբար մեզ հայերիս անյայտ է այդ:

«Պարզատումարից» յետ, հէնց հետեւեալ տարին 1513 թւին նոյն Վենետիկում տպագրեցին չորս հատ հայերէն գրքեր—«Պատարագատետր», «Ուրբաթագիրք», «Տաղարան» և «Աղթարք» և գրանցից մէկի յիշատակարանում ասեա՛ծ կայ, որ գործը կատարել է «մեղապարտ Յակոբի» ձեռքով. թէ ո՞վ է այդ Յակոբը՝ Վենետիկի տպարանատէր, թէ՛ այդտեղ ապրող մի հայ՝ մեզ յայտնի չէ:

Այնուհետև հայերէն գիրք մէկ էլ տպագրուեմ է 52 տարուց յետոյ 1565 թւին նոյն Վենետիկում և այդ գիրքն էր «Մաղմուրը»: Այստեղ արդէն յայտնի է որ «Մաղմուրը» տպագրեցին Թիւրքիայի Թորթաք քաղաքացի Արզար դպիրը և իր որդի Սուլթանշահը, որոնց այդ ժամանակի Միքայէլ կաթողիկոսը ուղարկել էր Հռոմ Պապի մօտ. որպէս զի խնդրեն իր կողմից ազատել քրիստոնէայ հայերին մահմեդականների տիրապիտութիւնից:

Արզարը և իր որդին Վենետիկում առեւերը փորագրել տալով, տպեցին «Մաղմուրը» և 1567 թւին արդէն Կ. Պօլսում սկսեցին տպագրութիւններ:

Ապա 1584 թւին Հռոմում տպագրուեմ է «Տօմար Գրիգորեան» իսկ 1587 ին հայաստանցի մի քահանայ Յովհաննէս Տերգնցի, որ իր որդու հետ գնացել էր Եւրոպա, տպագրեց Վենետիկում մի «Մաղմուսարան»:

Պարզ երևումէ թէ հայ տպագրութիւնը ինչպէս ծանր և դժարին քայլերով էր սառնադիրում:

1512 թւից համարեա անցել էր մի դար և սակայն հայ առեւերով տպագրեա՛ծ գրքերի թիւը 9 ից չէր անցել:

Եւ միթէ կարելի էր աւելին սպասել. իւրաքանչիւր կեանք, լինի այդ կենդանական թէ՛ մաւուր, իր զարգացման համար նիւթեր է պահանջում—նպաստաւոր պայմաններ, իսկ հայ կեանքը, խղճուկ հայ իրականութիւնը զուրկ էր կենդանութիւնից:

Նա ճնշեա՛ծ և հալումա՛շ էր եղա՛ծ:

Ինչպէս յայտնի է XVII-րդ դարի սկզբում Շահ-Աբրաար Արարատեան աշխարհից և նրա հարեան դաւաճաններից անագին թւով հայ ազգամեակութիւն քշեց Պարսկաստան. որոնց մի մասից առաջ եկաւ Նոր-Ջուղայի ազգաբնակիցները—հարուստ վաճառականութիւնը:

XVII-րդ դարի յիսուական թւականներին սկսումէ հայերի մէջ գրական շարժում, դարձեալ վանքերում: Ջգացումէ գրքերի և ընթերցանութեան պահանջ և ա՛նա Միւսեայ երկրում—Տաթևի վանքի մօտ և Բաղէշում—Ամրդօրուի վանքում բացում են դպրոցներ, որոնք ապա միանում են Նոր-Ջուղայում:

Գրական շարժումը, բնական է, տպարանի պահանջ պիտի գգար և ա՛նա մենք տեսնում ենք Ջուղայի առաջնորդ Սաչատուր Կեսարացու ջանքերով Ջուղայի Ամենափրկիչ վանքում հիմնումէ տպարան. որտեղից 1640 թւին լոյս տեսաւ «Հարանց վարք» անունով գիրքը:

1655 թւին Էջմիածնի կաթողիկոս է դառնում Յակոբ Ջուղայեցին, յայտնի իր շինարարութեամբ և բարեկարգութիւններով:

Հայկական տպագրութեան գործի առթիւ նա Եւրոպա է ուղարկում Մատթէոս Ծարեցի դպիրն:

Վերջինս անցնում է Իտալիա բայց հալածելով

կաթօլիկ հոգևորականութիւնից, գնում է Հօլլանդիայի Ամստերդամ քաղաքը և հիմնում է տպարան: Քանի մի տարի գրքեր տպելուց յետոյ Մատթէոսը մեռնումէ, թողնելով իր տպարանը Աւետիս անունով ջուղայեցի մի վաճառականի, որը Էջմիածնից հրաւիրեց իր վարդապետ հղթօրը, շարունակելու Ծարեցու գործը:

Այդ վարդապետը յայտնի Ոսկանն էր, որը նշանաւոր դարձաւ իր տպարանով:

Ոսկանը 1662 թւին Էջմիածնից գալով Ամստերդամ և իր ձեռքը առնելով տպարանը, 1666 թւին առաջին անգամ տպագրեց և լոյս ընծայեց հայերէն Աստուածաշունչը:

Այնուհետև նա տպարանը տեղափոխեց Իտալիա (Լիվօրնօ) և Ֆրանսիա (Մարսէլ):

Նրա մահից յետ տպարանն էլ փակեց (1685 թ.):

Հետեւեալ XVIII և XIX դարերում հայ տպագրութիւնը ունեցաւ ծագկեալ և փայլուն շրջան:

1713 թւին Վենետիկի ս. Ղազար կղզու վրա Մխիթար Սերաստացի կաթօլիկ վարդապետը հիմնեց իւր միարանութիւնը, որը մինչև այժմ գոյութիւն ունի և պարագումէ՛ գիտական աշխատանքներով, թարգմանութիւններով և տպագրութեամբ:

1774 թւին սրանից մի խումբ պառակտելով՝ բաժանեց և Աւստրիայի Տրիեստ քաղաքում մի վանք շինելով, հիմնում է այնտեղ, ուր նոյնպէս առաջ է տանում տպագրական գործը և ապա 1811 թւին տեղափոխելով Վիեննա, այստեղ բերեց նաև իւր տպարանը, որ նոյնպէս մինչև այժմ շարունակում է իւր գործունէութիւնը:

Վենետիկի Մխիթարեանների մեծ գործերին են պատկանում Մխիթար Աբրայի հրատարակած մեծադիր պատկերազարդ Աստուածաշունչը, Հայկազեան մեծ բառարանը, ապա Չամչեանի Հայոց պատմութիւնը, երեք հատոր, Հայկազեան նոր բառգիրքը երկհատոր և այլն: Իսկ 1843 թւից «Բազմավէպ» ամսաթիւթը, որ շարունակում է մինչև այժմ:

Վիեննայի Մխիթարեանների տպարանական գործերից յայտնի են—«Եւրոպա» լրագիրը, «Հանդէս ամսօրեայ» ամսագիրը, որը հրատարակում է մինչև այժմ և հայր Տաշեանի «Ցուցակ ձեռագրաց» մեծ աշխատութիւնը:

XVIII-րդ դարի առաջին քառորդում Նոր—Ջուղայի հայ վաճառականներից շատերը տեղափոխուեմն Հնդկաստան և այստեղ 1700 թւին Յակոբ Շահամիրեանը Մողրաս քաղաքում բաց է անում տպարան և հրատարակում մի քանի ինքնուրոյն հեղինակութիւններ: Այդ տպարանի փակելուց յետոյ մաղրասահայ քահանայ Յարութիւն Շմաւօնեանը 1789 թւին հիմնում է նոր տպարան, որը գոյութիւն է ունենում մինչև 1820—ական թւականները: Յարութիւն քահանայ Շմաւօնեանը 1797 թւին հիմք է դնում առաջին հայերէն պարբերական հրատարակութեան, խմբագրելով և հրատարակելով «Ազգարար» ամսագիրը:

Նոյն XVIII-րդ դարի երկրորդ կիսում էջմիածնի կաթողիկոս Միմէօն Երևանցին 1760—ական թւականներին հիմնում է Էջմիածնում տպարան, որը շարունակումէ նաև նրա յաջորդ Ղուկաս կաթողիկոսի օրով:

Նոյն Միմէօն կաթողիկոսը ուշադրութիւն է դարձնում նաև Ռուսաստանի հայ գաղթականութիւնների վրա, որոնցից ամենահինն է Աստրախանի հայութիւնը, ապա Մոզդուկի, Ղլարի, Նոր Նախիջևանի, Մոսկուայի և Պետերբուրգի:

1780-ական թւականներին ջուղայեցի մի հայ վաճառական—Գրիգոր Սալգարեան գնում է Ամասեր-դամում հայերէն տառեր և տանում Պետերբուրգ, ուր և բաց է անում տպարան:

Սիմէօն կաթուղիկոսի նշանակած ուսասնայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը աջակցում է նրա գործին, որը և յառաջադիմում է:

1789 թւին Արղութեան սրբազանը գնելով նրա-նից այդ տպարանը, տեղափոխում է իւր հիմնած նոր նախընկանի մօտ Ս. Պազ վանքը, ուր և մինչև 1794 թիւը հրատարակում է մի շարք գրքեր:

1794 թւին այդ տպարանը փոխադրում է Աստ-րախան, և գոյութիւն է ունենում մինչև 1827—28 թւականները:

Աստրախանի տպարանից դուրս են եկել մի շարք հայերէն, ըստ մեծի մասամբ կրօնական բովանդակութիւն ունեցող և ոսերէն գրքեր:

Այնուհետև հայ տպագրութեան խոշոր կենդանու-նրից մէկն է հանդիսացել Փարիզը, ուր հիմնել է Մուրադեան վարժարանը և որի երեք ուսուցիչներ—մխիթարեան վարդապետներ՝ Սարգիս Թէոդորեան, Գարրիէլ Այվազեան և Ամբրոսիոս Գալֆանեան սկը-սում են գրական—հրատարակչական գործունէութիւն:

Չուլումեն զեղեցիկ և քնքոյշ տառեր և փոխում, ճոխանում է հայ տպագրութիւնը: Փարիզից յետոյ նշանաւոր է Յրանսիայի Մարսէլ քաղաքը, ուր 1885 թւից թուրքահայ գրող Մկրտիչ Փարթուզաբեկեանը հիմնեց և հրատարակեց իր «Արմենիա» թերթը, որը գոյութիւն ունի մինչև այժմ:

XVIII-րդ դարում Կ. Պօլսում բացւած հայ տպարան-նրից մի քանիսը իրենց գոյութիւնը պահպանել էին նաև XIX-րդ դարում երբ, և որի վերջում մանաւանդ, աւելացան տպարանները և դարկ տւին թէ տպագրու-թեան և թէ գրքերի ու լրագրների հրատարակու-թեանց գործին:

1850—ական թւականներին Թիւրքաց Հայաստանը ևս ունեցաւ իր մամուլը: Խրիմեան Հայրիկը, այն ժամանակ զեռ վարդապետ Վարդայ վանքում, հիմ-նելով մի փոքրիկ տպարան, որ բերել էր Պօլսից, հրատարակում է «Արծիւ Վասպուրականի» անունով իր ամսատետրերը:

Թիֆլիսը, Կովկասի սիրտը, մինչև ներսէս Աշ-տարակեցու առաջնորդութիւնը, չունէր տպարան: Ներ-սէսը 1824-ին հիմնելով Թիֆլիսում իր դպրոցը, ցան-կանում էր ունենալ այդտեղ նաև տպարան:

Նրա բարեկամ Գէորգ ազա Արծրունին Հոլլան-դիայի Ամստերդամ քաղաքում գնում է հայերէն տառեր և նւիրում ներսիսեան դպրոցին:

Եւ անս ներսիսեան դպրոցի տպարանը եղաւ առաջինը Թիֆլիսում և թէև խեղճ գրութեամբ, սա-կայն մինչև 1860—ական թւականները նա միակն էր, ուր տպւում էին հայերէն գրքեր:

XIX-րդ դարում հայ տպագրութիւնը ճոխացաւ և տարածւեց Թիֆլիսից դուրս հայաբնակ վայրերից շատերը:

Տպարաններ բացւեցին Եուզի և Եամախի, Բա-յու և Երեան, Ալեքսանդրապօլ և Գանձակ:

Հայ տպագրութիւնը անցաւ նոր—Ջուղայից Թեհ-րան և Թաւրիզ: Հնդկաստանի Մադրասից և Կալկա-թայից Եգիպտոս և Ալեքսանդրիա, Գերմանիա և Անգլիա, Յունաստան և Շվեյցարիա: Նոյն իսկ Եւրո-պայից դուրս Ամերիկայում ունեցել ենք և ունենք բազմաթիւ հրատարակութիւններ և գանազան ուղղու-թիւններով պարբերական մամուլ:

Տպագրութեան արևտար Գուտտենբերգի գիւտից յետ, այնքան առաջադիմի և զարգացի է, որ այժմ կան ձուլող ու շարող, կտրող ու դասաւորող մեքե-նաներ, որոնք օրեկան հազարաւոր գրքեր և տանեակ հազարներով թերթեր են լոյս ընծայում:

Հայ մամուլը անմաս չէ սրանցից և մենք յօրելիանական տարում պարծանքով կարող ենք ասել, որ մենք ևս ունենք պարբերական հրատարակութիւն-ներ, որոնք այս նորագիւտ մեքենաներով են տպագր-ւում և հրատարակւում:

Եւ անս այս մեծ տօնն է, որ կատարում է հայ տպը:

Մեր գրականութիւնը և տպագրութիւնը թէև փոքրիկ քայլերով՝ սակայն առաջադիմում է և հայը իր ուժեղ և զիտութեան զէնքերով պատրաստ շրջա-պատում անդէն և անպատրաստ չէ առաջ տանելու քաղաքակրթութեան զրոշը:

Նա ունի զրիչ և մամուլ:

Սյոզ զէնքը մեզ տեսնորին է, որ այսօր փառք ենք տալիս: Նրանց է որ ուղղում ենք մեր ձօները և երախտագիտութեան զգացմունքով բարձր ձայնով գոչում ենք—յաւէրժ յիշատակ մեծ գործիչներին: Յաւէրժ յիշատակ մեր ուսուցիչներին:

ԳԱՆՈՒՍՏ ՔԱՀ. ՔԱՐՏԱՇԵԱՆ



ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

I.

1912 թ. ապրիլի 1-ին յօրհանարան տարի է հռչակուած հայ ազգի կողմից: Յօրհանարան տարին վերջանալու վրա է և հայ ազգը այդ տարուայ ընթացքում իր մասնաճիւղի միջոցով շատ խօսեց, շատ պատմեց և շատ ոգևորեց նրա ստաջը զրուած ազգային այդ մեծ յօրհանարանը:

Այդ յօրհանարանը հայ գրի և սուղարութեան յօրհանարանն է:

Որպէսզի կարողանանք հասկանալ այդ մեծ յօրհանարանի իսկական նշանակութիւնը, որպէսզի կարողանանք իմանալ թէ ի՞նչու հայ ազգը ամբողջ մի տարի համազգային տօն է հռչակում, այն էլ մեծ տօն և այդչափ ոգևորում այդ տօնով, մենք պէտք է անշուշտ թափանցենք գրի ու գրականութեան տւած օգուտների մէջ. մենք պէտք է խորը ըմբռնենք գրի, գրքի և գրականութեան տւած օգուտները ընդհանրապէս և հայ ազգին մասնաւորապէս:

Ուղիղ 1500 տարի սրանից ստաջ հայ ժողովրդի մտաւոր կեանքը կատարեալ անապատ էր ներկայացնում. մտաւոր ոչ մի շարժում, ոչ մի կենդանութիւն...:

Փրկչի Աւետարանի համամարդկային վեհ գաղափարները նոր ընդունած, մի տանջուած ժողովուրդ, ըստ երևոյթին, ինչպէս պէտք էր ոգևորէր, ինչպէս պէտք էր ընդգրկէր այդ նրա սրտին միանգամայն մօտ սրբազան աւանդները...:

Բայց կրկնում եմ, այդ քրիստոնեայ կոչուած ժողովրդի ներքին, բարոյական, մտաւոր կեանքը մեռած էր...: Եկեղեցին, Աստուծոյ տաճարը, որ այդ ժողովրդի միակ մխիթարութեան, հոգեկան հանգստութեան վայրը պէտք է լինէր, այդ եկեղեցին անկենդան մեռած տարր էր հայ ազգի համար...:

Ի՞նչու էր այդպէս. ի՞նչ էր զրա պատճառը:

Որովհետեւ չկար քաղաքակրթութեան, լուսաւորութեան, մարդկային միտքը արտայայտող և ուրիշներին հաղորդող մեծ գործօնը, որի անունն է ազգային գիր:

Հայ ազգը այդ ժամանակ չունէր տառեր:

Երևի թէ կրկնած կրկնեմ շատ անգամ արդէն լուած ճշմարտութիւնը, որ մի որեւէ ազգի ինքնուրոյնութիւնը, ազգային անկախութիւնը պահպանողը նրա լեզուն է տառերի և գրի միջոցով:

Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն այդ ժամանակներում իբրև ազգ ապրող հայ ժողովրդի օրերը հաշուած պէտք էր համարել: Վտանգ էր սպառնում նրա ինքնուրոյնութեանը:

Այն, անշուշտ, մեծ չափազանց մեծ վտանգ էր սպառնում հայ ժողովրդին, եթէ հէնց այդ ժամանակներում կեանքը, կեանքի հրամայողական պահանջը ստաջ չքաշէր, ասպարէզ չղուրս բերէր ազգային մեծ լուսաւորիչներին, որոնք ազատեցին հայ ազգը կորստից, տալով նրան ազգային գիր և գրականութիւն:

Այդ լուսաւորիչները ս. Սահակ և Մեսրոպն էին:

II.

Տառերը գտնուած էին: Հայաստանում այնպիսի մի շարժում, այնպիսի մի յիզափոխութիւն ստաջ եկաւ. որպիսին երբէք չի տեսիլ հայ ժողովուրդը:

Որպէսզի մարդ կարողանայ ճշգրիտ գաղափոր

կազմել այդ ժամանակի մասին, հարկաւոր է կարգաւ ակնաւորեալ մատենագրներին և մեր ստաջ վառ կերպով կատարեալ այն մեծ յիզաշրջումը, որ կատարուած էր հայ տառերը գտնելուց անմիջապէս յետոյ:

Մարդիկ վերածնուել էին:

Մթութեան մէջ դարեր խաբխափած ժողովրդի աչքերն էին բացուել. նրանք լոյս էին տեսել:

Նրանք հնարաւորութիւն էին ստացել խօսելու, հասկանալու և հասկացածը իրար պատմելու...:

Շարժում, վառ գործունէութիւն, մաքի յիզափոխութիւն՝ լոյսի, արեւի, գիտակցութեան շուրջը...:

Թարգմանում են գրքեր, բացում են դպրոցներ, ժամասացութիւն է կատարում հասկանալի, մայրենի լեզուով, բացատրում են Աւետարանի վեհ գաղափարները—մի խօսքով ամենուրեք հնչում է միայն և միայն մայրենի խօսքը...:

Վերակենդանանում է հայ ժողովուրդը:

Յնձում են ազգի անզուգական լուսաւորիչները իրենց գիւտի յաղթանակով:

Անկենդան և անժողովրդական եկեղեցին սկսում է կենդանանալ և ժողովրդի հոգեկան մխիթարութեան և անդորրութեան միակ վայրը դառնալ:

Եւ այսպիսով, մի քանի տարիների ընթացքում ս. Սահակի և Մեսրոպի ստաջացրած շարժումը կոնց, կոփեց, պատրաստեց մի այնպիսի գիտակից, անձնուէր համոզմունք, սրբութիւն ճանաչող ժողովուրդ, որ երբ հէնց այդ ժամանակներում փորձ եղաւ պարսից անիրաւ Յազկերդի կողմից ձեռնամուխ լինել այդ խեղճ ժողովրդի սրբութիւն-սրբոցը, նրա խիղճը, հոգին ոտնակոխ անելու, էլիքարականացած հայ ժողովուրդը մի սիրտ, մի հոգի գարձած, իսկոյն սուանց մի բողբ ուշացնելու, դուրս եկաւ մինչև վերջին շունչը պաշտպանելու իր եկեղեցին, իր լեզուն, իր ազգը...:

Եւ ի՞նչ...:

Պարսից հազարաւոր կազմակերպուած սրբի և թրերի զէմ դուրս էր գալիս մի խեղճ ժողովուրդ և տանում յաղթանակը...:

Այդ անձնուէր ժողովրդի բարոյական մեծ յաղթանակի ստաջ անձ դարեր են, որ պատկառանքով խոնարհում են յետագայ հայերը...:

Գտնուած տառերի տիրող շարժման հետեանքն էր այդ յաղթութիւնը...: Ս. Սահակի և Մեսրոպի դպրոցի սաներն էին գաղափարի համար կուռղները...:

Այն, այդ սաները կուռղներ, կուռղներ և յետագայում իրենց լեզուի և ազգութեան համար:

Հազար հինգ հարիւր տարի իրենց արիւնով պահեցին զանազան սրբից և արիւնարբու բռնակալներից և անաղարտ կերպով մեզ հասցրին:

Գիրը և գրականութիւնը մեզ 1500 տարուայ ընթացքում պահեցին իբրև ինքնուրոյն ազգ, մեր ազգային լեզուով, սովորութիւններով և պատմութիւնով:

Ահա ս. Սահակի և Մեսրոպի մեծ և գլխաւոր ծառայութիւնը և տառերի գիւտի նշանակութիւնը:

Ս. ՔՍՀ. ԱՍԼԱՆԵԱՆՅ



ՄԵԾ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Պատիւ, յարգանք Մեծ Մեսրոպին,
 Որ գիր տւաւ հայ ազգին.
 Աչքը բացեց խաւար կոյրի,
 Լեզու տւաւ մեծ համբին:
 Լուսաջահը ձեռքն առած՝
 Խաւարի դէմ մարտ մղեց.
 Թմրած գանգը, հանգած սիրար
 Զօրեղ թափով հրդեհեց:
 Լուսավառան դարձաւ աշխարհն,
 Գիր ու դպրոց ուսուցաւ.
 Գրում, կարգում, թարգմանում են
 Աշակերտներն սրտացաւ:
 «Ոսկեղէն դար» ասին պատմիչք
 Այն վերգարթի մեծ դարը.
 Մեծ ու մանուկ գրիչ առան
 Ու գովեցին այն դարը:
 Սակայն այժմ, մեծ վարժապետ,
 Գիր ու գրիչ ծախեցինք.
 Սուրբ աւանդդ օտարի հետ
 Թեթև ու հեշտ փոխեցինք:
 Պատիւ, յարգանք Մեծ Մեսրոպին,
 Որ գիր տւաւ հմտալից.
 Ամօթ, անէճք այն վատ հային
 Որ գիրն հանեց իր սրտից:

ԳԼՈՐԳ ՔԱՆ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

1 հոկտ.

ՆԱԽՆԻ ՀԱՅՈՑ ԳՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ:

Երկու ահանաւոր պատմագրեր՝ Աքանչիւի Կո-
 բիւնը և պատմահայր Խորենացին իրրև ժամանակա-
 կիցներ, Մեսրոպի և Սահակի անմիջական յառաջադէմ
 աշակերտներ, մանրամասն աւանդում և նկարագրում
 են մեր գրերի գիւտի բոլոր հանգամանքները, այնպէս
 որ մեզ մնում է միայն ամենամեծ երախտագիտու-
 թեամբ ընդունել նրանց հաղորդածները իրրև զուտ
 պատմական ճշմարտութիւններ, որովհետև ահանա-
 տեաների պատմածների մասին կասկածանքը արդէն
 անարժան քննամոլութիւն կլինէր:
 Կորիւնի և Խորենացու աւանդածները ամրագն-

դում է Ղազար Փարպեցին, միայն այն տարբերու-
 թեամբ, որ առաջին երկու պատմագրերը վերագրում են
 ս. Մեսրոպին բոլոր հայկական գրերի գիւտը, իսկ
 Ղազար Փարպեցին տրամադիր է Մեսրոպին վերագրե-
 լու նախնի հայոց նշանագրերի մշակումն և լրացումը:

Այստեղ արդէն, ինքն ըստ ինքեան առաջ է գա-
 լիս հետեւալ կարևոր հարցերը. առաջին՝ թէ արդե՞օք
 Մեսրոպից առաջ եղել է հայոց գիր. երկրորդ՝ եթէ հա-
 յոց գիր եղած է, արդե՞օք հայերը գոնէ օգտուել են
 հարեան աւելի կուլտուրական ազգերի՝ յունաց, ասոր-
 րոց կամ պարսից գրութիւններով հայոց լիզուլ գրե-
 լու համար:

Այն նիւթերը, որ մեզ մատակարարում են մեր
 նշանաւոր պատմագրերը Ագաթանգեղոսից սկսած
 մինչև Ղազար Փարպեցին լեփ—լիցուն են կրօնական
 կամ պատերազմական անցուղարձերով և շատ քիչ
 բան են տալիս հետաքրքիր ընթերցողին մեր նախ-
 նիքի զուտ կուլտուրական կեանքի վերաբերմամբ:

Եթէ զուք ցանկանում էք նախնիների կեանքի մի
 կողմը լուսարանել ժամանակակից պատմա-կուլտուրա-
 կան հայեցակէտով, զուք միանգամայն մնում էք ձեռն-
 թափ ու կամայ սկամայ դիմում էք այս ու այն են-
 թագրութիւնների. մի մեթոդ, որ յամենայն դէպս
 խիստ գիտական համարել չի կարող:

Երբ զուք ուշի ուշով թերթում էք Փաւստոս Բիւ-
 զանդացուն, որ գրւած է մեր գրերի գիւտից առաջ, սկա-
 մայ գալիս էք այն եզրակացութեան, որ գիրքը գրւած
 է եղել հայերէն և ոչ թէ յունարէն ու յետոյ հայերէն
 թարգմանւած. ինչպէս որ առհասարակ ընդունւած
 է կարծիքը):

Փաւստոս Բիւզանդի մէջ այնքան հայ ժողովր-
 դական դարձւացքներ կան, որ հայ լիզելի փոքր իշատէ
 ճաշակ ունեցողը վերջնականապէս կզայ այն եզրակա-
 ցութեան, որ այդ գիրքը սկզբից մինչև վերջը գրւած
 է բուն հայ մարդու, ժամանակակից խօսակցական ու
 գրականական հայերէնին լաւ տիրապետող մի անձնա-
 ւորութեան ձեռքով, չնայելով՝ որ այդ անձնաւորու-
 թիւնը օտարի անուն է կրում իւր վրա կամ թագ-
 նւած է օտարի անուն տակ:

Նոյնը կարելի է ասել և Ագաթանգեղոսի մասին,
 որ իւր երկը գրել է մեր գրերի գիւտից աւելի քան
 հարիւր տարի առաջ: Կատին Ագաթանգեղոսը հաւա-
 նական ենթանդրութեամբ լատիներէն կամ յունարէն
 պիտի գրած լինէր իւր երկը, բայց ոչ լատիներէնի և
 ոչ էլ յունարէնի մէջ չկան այն տառերը, որոնցով
 այնքան հարազատ ճշտութեամբ գրւած են այդ գրւած-
 բում եղած բազմաթիւ հայկական աշխարհալրակա՝ և
 այլ յատուկ անունները:

Միւս կողմից երբ զուք կարդում էք Եղիշէն և
 Եզնիկը, կարդում էք ս. Սահակի ձեռքով թարգման-
 ւած Ասուածաշունչ գիրքը, զուք հիացած և սքանչա-
 ցած լիզելի նրբութեամբ և հարստութեամբ, կամայ,
 սկամայ գալիս էք այն եզրակացութեան, որ հայ գրե-
 րի գիւտից առաջ հայ լիզուով պիտի եղած լինէր մի
 շատ ծաղկած և փարթամ գրականութիւն. թէ թր
 գրութեամբ, ինչ հայերէն տառերով արդե՞օք, թէ հա-
 րեան ազգերի տառերով, այդ մնում է արդէն հանե-
 լուկ:

*) Մ ա ն օ թ . Այս և նման խորհրդածութիւնները
 կատարելիս, մենք մեր նախնի մատենագրներին ըն-
 դունումինք վաւեր, ճշմարտագատում ու իւրաքանչիւ-
 րին իւր ժամանակագրական յատուկ վայրերում:

Աստուածաշնչի թարգմանութիւնը կատարուած է անմիջապէս գրերի գիւտից յետոյ, մինչև Եզնիկը նոյնպէս շատ տարիներ չի անցնում: Մինչև Եզնիկը, Պորենացին ու Ղազար Փարպեցին անցնում է մի քանի տասնեակ տարիներ միայն և այդ մարդիկ տալիս են մեզ կատարելապէս մշակած, սքանչելի լեզուով գրութիւններ: Եզնիկի ու Եզնիկի լեզուն ունենալու համար, այն էլ այն ժամանակեայ պայմաններում, երբ գիրքը գրուած ու կարդացուած էր շատ սահմանափակ շրջաններում—մենաստանների ու վանքերի պարիսպների մէջ—հարկաւոր կլինէր դարերի մշակումն:

Կլասիկական յունարէնն ու լատիներէնը նոյնպէս և նորագոյն լեզուները՝ ֆրանսերէնը, գերմաներէնը ուսերէնը մինչև իրենց ծաղկման ներկայ աստիճանը, դարերի մշակման բովով անցան:

Մեր նոր գրականական լեզուն, աշխարհարարը, չնայելով, որ ա՛ն աւելի քան հարիւր տարւայ մշակման ընթացք ունի, չնայելով իւր ծաղկման անհամեմատ աւելի յաջող պայմաններին, դեռ ևս շատ հեռու է իւր զարգացման գագաթնակէտին հասնելուց:

Անօրինակ և դարմանալի երևոյթ:

Եւ իսկապէս տէք քուրդի, ալբանացու, կամ չերքիզի ձեռք սեպական ազգային գիր և ի՛նչ էք կարծում, այդ ազգերը, իսկոյն, մի քանի տարիների ասենք նոյն իսկ մի քանի տասնեակ տարիների ընթացքում ընդունակ կլինէ՞ն այդպիսի ճոխ, հարուստ և փարթած լեզուով երկեր տալու: Ինչպէս հինգերորդ դարից մնացած գրութիւնները:

Ի հարկէ ո՛չ:

Ուրեմն չնայելով պատմական դրական փաստերի բացակայութեան, մենք դրականապէս դալիս ենք այն եզրակացութեան, որ մինչև Սահակն ու Մեսրոպը, մինչև մեր գրերի գիւտը, հայոց մէջ գոյութիւն է ունեցել շատ լայն չափով, մի կամ նոյն իսկ գուցէ մի քանի, գրականական շրջաններ, որոնց ընթացքում հայոց լեզուն այնքան բարձր զարգացման է հասել, որպէսին մենք տեսնում ենք գրերի գիւտից անմիջապէս յետոյ Սահակի, Մեսրոպի, Եզնիկի, Եզնիկի, Պորենացու, Ղազար Փարպեցու և այլոց երկերի մէջ: Նախնի հայոց գրականութեան ու լեզուի մասին մենք ենթադրում ենք հետևեալը:

Դեռ Քրիստոսից մի քանի դար առաջ և առ սակաւը Արշակունեաց մուտքից անմիջապէս յետոյ, Հայաստանում սկսուած է հայոց լեզուի ու գրականութեան մշակումը, հաւանականաբար սեպական դրով, որ գնալով զարգանում է մինչև քրիստոնէութեան մուտքը Հայաստանում:

Պարթևական լեզուի և հայոց արարատեան բարբառի խառնուրդից կազմուած է ոստանիկ քաղցրահնչիւն պետական լեզու-գրարարը, որ հետզհետէ ճոխանում է ու զարգանում հայոց արքունի պաշտօնական ու զիւանական գործերում. քրմական շրջաններում, մեհնական մատեաններում, դրանց դպրոցներում ու դպրեաններում, նախարարական ընտանիքներում, վաճառաշահ բազմամարդ կենդրոնական քաղաքներում ու ազգային անդիր բանաստեղծութիւններում (վիպասաններ) և այս շրջանը տեւում է մինչև քրիստոնէութեան մուտքը Հայաստան:

Մուտք է գործում քրիստոնէութիւնը—անկասկած անհամեմատ մի աւելի բարձր կուլտ քան հեթանոսութիւնը, բայց քրիստոնէութեան մուտքը Հայաստանում կատարուած է բազմաճարիւր օտար՝ յոյն և ասորի կրօնաւորների արշաւանքով, որոնք անխնայ

կործանում ու հարւածում են այն բոլորը, ինչ որ կապ ունէր կոապաշտական կրօնի և նրա արարողութիւնների հետ: Կործանելով հայոց հեթանոսական մեհնաները, հեթանոսական դպրոցները, այրելով ու ոչնչացնելով մեհնական գրւածները, հալածելով ու կոտորելով քրմական դասը, միևնոյն ժամանակ մի անբուժելի հարւած են հասցնում նախնի հայ լեզուին ու դպրութեանը:

Հայ լեզուն հալածուած է նոր կրօնի միջից, իրբն կոապաշտական արարողութիւնների հետ շաղկապուած մի լեզու և նրա փոխանակ սկսում են թագաւորել յոյն և ասորի լեզուները. կամայց, կամայց գործածութիւնից դուրս է գցուած և հայ գիրը:

Բայց հայ լեզուի վտարումը եկեղեցուց, դեռ չէր նշանակում նրա իսպառ ոչնչացումը: Ոստանիկ լեզու գրարարը դեռ շարունակում է թագաւորել արքունիքում, նախարարական շրջաններում, բազմամարդ կենտրոնական քաղաքներում, անդիր բանաստեղծութիւնների, վիպասանութիւնների մէջ, որոնք ընդարձակ ծաւալ ունէին Հայաստանում. բայց ամենից աւելին քարոզների մէջ, ուր հոգևորականութիւնը արդէն ակամայ ստիպուած էր մայրենի լեզու գործածել, այնպէս որ օտար հոգևորականներից շատերը ստիպուած էին հայերէն սովորել:

Բացի դրանից հալածուած քրմական դասակարգը ապաւինում է երկրի լեռնոտ մասերում (Գողթն, Միւնիք և այլն) տանելով իւր հետ հայ լեզուն ու դպրութիւնը:

Սակայն օտարի լեզուն երկար տիրապետել չըպիտի կարողանար. քրիստոնէութիւնը կործանելով նախկին կոապաշտական դպրոցները, նրանց փոխանակ հաստատեց իւր սեպական դպրոցները, ուր սովորում էին հարազատ հայ մանուկներ: Շատ բնական է, որ զուտ հայկական դպրոցական սերունդը աճելով հաշտ աչքով չպիտի մտիկ անէր օտար բանաւորներին, մանաւանդ որ այդ աշակերտութիւնը մեծ մասամբ նախկին քրմական դասակարգի դուակներէն էր:

Ենթադրելի է, որ օտար լեզուների դէմ անսագոնիզմը սկսեց դեռ Մեսրոպից շատ առաջ, գնալով հետզհետէ այդ յարաբերութիւնները լարման գագաթնակէտին հասան և Մեսրոպի ժամանակ մայրենի լեզուի ու սեպական գրի գործածութեան փափազը արդէն դարձաւ մի համազգային հրամայողական պահանջ, որին այնքան յաջող ու գեղեցիկ լրացում տւին անպուզական Մեսրոպն ու Սահակը:

Խ. ՂԱՄԱՐԵԱՆ



Հ Ա Յ Ո Ց Լ Ե Ձ Ի Ի Մ Ե Ծ Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ը

Ո՞վ էր այդ մեծ վարժապետը, որ իր ազգի սիրոյ և ապագայ խօսքի համար պատրաստ էր իր անձը բոլորանէր զո՞հ բերելու:

Տարօն գաւառի Հացեկաց գիւղից մի մշեցի աշխարհական հայ, որ յիտապայում կուսակրօնի սքեմ հագաւ, ուսուցիչ և զիւանազպիւր:

Նա ուսումնասիրել էր իր ժամանակի լիզուները, գրում, կարգում էր այդ լիզուներով, քաջատեղեակ հայկական անցեալ կեանքին, սակայն նա միշտ մտատանջութեան մէջ էր և հարց էր տալիս իրեն, թէ ի՞նչու մենք հայերս ունենք անցեալ, անցեալի պատմութիւն, բայց չունենք ամենաճարկաւորը—հայերէն տառերը:

Մտածում էր նա, ի՞նչ է նշանակում խօսել հայերէն, բայց այդ խօսքը գրել ստորոց, պարսից կամ յունաց լիզուներով: Ո՞չ, այն ազգը, որ առանց գրի, բերանացի է ապրում, չի կարող գոյութիւն և գրականութիւն ունենալ. տարիների ընթացքում նա կձուլւի իրենից զօրեղագոյնի հետ և անհետ կկորչի, ինչպէս շատ հեթանոս անգիր ազգեր կորել էին:

Այդպէս էր մտածում մեծ վարժապետը:

Այս էր պատճառը, որ նա գրի և գրականութեան ոյժին աւելի էր հաւատում:

Այդպիսի խորհրդածութիւններով տարւած, նա գիշեր ցերեկ անքուն տանջւում էր հայկական տառերի գիւտի վրա տքնելով:

Մեծ վարժապետը շատ անգամ էր փորձեր արել յուշ նարէն և ուրիշ լիզուների տառերի վրա ձևելու հայկական նոր հնչիւններ, բայց բոլորը ապարդիւն: Նա հագաւ բաւոր վերստեր կտրել, անցել էր բարձրաբերձ լիւններով և կածաններով, վտանգելով անձը մահի և փորձութեան, միայն թէ գտնէր հայկական ցանկալի այբուբենը, որով պէտք է ցոլացնէր քրիստոնէութեան ճոտապայթիները համապարփակ խաւարով պատած հայրենիքում:

Միջագետքից Ասորիք, Ասորիքից Անտիօք նա չափչփել էր մի քանի անգամ, ամիսներ, տարիներ անցկացնելով այս և այն գիտնականի մօտ, բայց ամէն տեղ էլ մնացել էր հիասթափւած: Քրտնաթոր տանջանքի հեզնանքն էին գրտնք միայն: Այլ ևս նա յոյսը կտրել էր մարդկանցից. «Մի յուսայք յիշխանս և մի յորդիս մարդկան» ասում էր նա, միակ յոյսը դէպի Աստուած էր անդրդուելի ջիւրմ հաւատով:

Նա տանջւում էր այժմ ցնորքների աշխարհում, քրտնքը կալլակնաձև ձակատից վայր էր թափւում: Նրա ուղեղն այրում էր և ջիւրմախտով բռնւած հիւանդի նման, նա «ոչ ի քուն և ոչ արթուն» տեսիլքի մէջ շարունակ խօսում էր. կարծես իր հանդէպ կանգնած են մարդիկ, որոնք ստիպում են նրան խօսել և պատասխանել. սակայն նա իրօք միայնակ, առանձնացած էր իր խցիկում և ոչ ոք չկար, որ լսէր նրա խօսածը: Նրա աչքերը յառել են մէկ կէտի և անս անցնում են նրա հոգեկան տեսողութեան առաջից պատկերների շարաններ, նա կտրւած է այս աշխարհից, նա արձանացել է: Անբջական երեսիթները հեղձեռեռ տեղի են տալիս աւելի պարզ պատկերներին, նրա հոգեկան տեսողութեան առաջ դուրս է գալիս մի ձևոք և անս «Երևութացեալ հոգւոյն աշաց թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի...» (Սորենացի):

Որոտընդոստ սթափւում է կարծեցեալ քնափութիւնից և ո՞հ հրաշք, հայկական այբուբենը, հայոց ապագայ լուսաւորութեան և գոյութեան խարխիւր արդէն ձգւած է:

Ուրախութեան և ցնծութեան բացականչութիւնները, սկսած թագաւորի և կաթողիկոսի պալատներից, հնչում են թնդաղին: Ամբոխն ևս հրճւում է անս անման խնդութեան ազալակներով. այս պալատներից հասած տօնական հանդէսի արձագանքն է:

Անցնում են տօնախմբութեան օրերը: Այժմ պէտք է տարածել հայոց լիզուն, հայերէն տառերով գրւած: Հայերէն տառերով գրքեր են հարկաւոր բայց չկան. հարկաւոր է նախ թարգմանել Աստուածաշունչը, Աւետարանը ժողովրդի համար: Պակասում են մարդիկ, օգնականներ: Հայերէն տառերով հայերէն լիզու իմացողներ չկան: Բայց փոյթ չէ, հայերէն գրիք հնարողը պիտէ ի՞նչ անել:

Դպրոց է հարկաւոր և նա բաց է անում:

Ահա մեծ վարժապետը կանգնած է դասարանում, որի առաջ շարւած նստած են դանազան գիւղերից և գաւառներից հաւաքւած ուշիմ, ընդունակ և սրամիտ մանուկներ՝ Մովսէս, Մամբրէ, Կորիւն, Եղիշէ և ուրիշ շատերը:

Սրանք գրում և կարգում են. վարժապետը հարցեր է տալիս, աշակերտները պատասխանում են յաջողակ:

Վարժապետը իր փառքի գագաթնակէտին է հասած:

Վազարշապատի դպրոցը ծաղկում է օրէցօր, ծաղկեցնելով հայ լիզուն:

Տարիներ են անցել, աշակերտները արդէն աւարտել են երկու կարգի բաժանւած—առաջնակարգ՝ յոյժ գովիլիք և երկրորդակարգ՝ գովիլիք: Պակասում է գրանց բարձրագոյն ուսումը: Այնտեղ, հեւում Պերիկլէսի Աթէնքը, ծովափնայ Ալեքսանդրեան և Բիւզանդիոնը հրաւէր են կարգում գրանց, գրկարաց կոչ անում այդ պատանիներին՝ դալ, փարւել գիտութեան տաճարին:

Եւ սկսւում է հայ ուսումնաստենչ պատանիների դաղթը դէպի օտար աշխարհ, որոնք յիտապայում գիտութեան լիտաա գանձերով բեռնաւորւած՝ պէտք է վերագաւնան հայրենիք, հայ աշխարհի ոսկեղենիկ դարը կանգնեցնելու: Եւ անս Հնովմի գիտնական կաճառներում Պարոյր Հայկազնը պերճախօսութեան գափնիով է պսակւած:

Դաւիթը փիլիսոփայութեան պոյքարներում «Անյաղթի» անունն է փատակել:

Ահա այս լուսաւորութեան փարոսները վերագարձել են Հայաստան և հայ աշխարհը վերածնելով իմաստութեան նոր աւազանում, միզապատ ազիտութեան վարագոյնը պատուել է արփիափայլ լոյսի առաջ:

Եկեղեցիների բնմերից հնչւում է հայերէն Աւետարանի խօսքը և ալիւրն:

Աժմ մեծ վարժապետը ննջւում է յաւիտեան, նրա աղօթքը Աստուծոն լսելի է եղել: Նա գիտէր, որ իր աշակերտները կշարունակեն իր թողած գործը և հայութիւնը անջինջ կմնայ:

Եւ նա չսխալեց:

1500 տարուց յետոյ մեծ վարժապետը նորից կենդանանում է մեր առաջ և մենք գիտակցօրէն խոստովանում ենք Մեսրոպի մեծութիւնը:

Ա. ԲՈՒՆԵԱՌԵԱՆՑ



Սահփաննոս Նազարեան



Միքայէլ Նալրանդեան




Սաչատուր Արովեան

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մօրըս համեղ կաթի պէս,
 Դու հայ բարբառ, քաղցր ես.
 Ուրախ, ախուր ժամերիս
 Սերս, անբաժան ընկեր ես:
 Թէ դարդ ունեմ, դարդոս ես,
 Թէ ուրախ եմ, խնդում ես.
 Թէ պայքարն է ինձ կանչում,
 Քաջաբեր ես ինձ հնչում:
 Իսկ թէ ստիս դաւ մտած՝
 Թունոս նեան է ինձ ուղղում,
 Ահագանդ ես դու զարկում,
 Շանթ ու կրակ արձակում:
 Ուր որ լինեմ, ուր որ երթամ,
 Ես առանց քեզ կեանք չունեմ.
 Անաէր մի թող, ես եթիմ եմ,
 Ես առանց քեզ կկորչեմ:
 Մի գանձ ունեմ ես աշխարհում—
 Այդ իմ կեանքն է թանգարժէք.
 Թէ պահանջեն, կեանքս կտամ.
 Բայց իմ լեզուն—նչ երբէք:

Գ. ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ.

30 սևագ.





Ղազարոս Աղայեան

ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ—ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳՐՈՒԹԻՒՆ

Հայկական գրերի գիւտի 1500 ամեակը և հայ գրքի տպագրութեան 400 ամեակը տօնելիս, ի միջի ալլոց, մի չափազանց կարևոր հարց պիտի բարձրացնել և այս կամ այն վերջնական վճիռը տալ—այդ հայ լեզուի ուղղագրութեան հարցն է:

Մեր գրերի գիւտի պատմութիւնից յայտնի է, առաջին՝ որ գրերը շատ մեծ ջանքերով ու տարիների աշխատանքով յարմարեցրին հայ հնչմանը. երկրորդ գրում էին ժողովրդին հասկանալի լեզուով. Սակայն 1500 տարիներ անցնելուց յետոյ, մեր լեզուն հետըզհետէ այնքան մեծ փոփոխութիւնների ենթարկուեց որ ժողովուրդը այլևս նրան չէր հասկանում: Քանի որ գրականութիւնը պարփակուած էր մնում միայն վանքերի պարիսպների մէջ, սահմանափակ մարզկանց շքրջանում և գրականութեան նիւթն էլ կրօնաբարոյական ու պատմական առարկաներն էին միայն, այդ հանգամանքը աննկատ էր անցնում, բայց երբ հարկաւոր եղաւ գրագիտութիւնը տարածել ժողովրդական լայն խաւերի մէջ, հասկանալի լեզուի գործածութիւնը արդէն անյետաձգելի մի պահանջ դարձաւ ու անհասկանալի, դժուար գրարար լեզուն փոխարինեց բոլորովին մատչելի աշխարհարարը:

Այս 1500 տարւայ ընթացքում փոփոխութեան ենթարկուեց ոչ միայն լեզուն, այլ և նրա ուղղագրութիւնը. առաջ որ գրութիւնը համապատասխանում էր հնչմանը՝ այժմ շատ և շատ դէպքերում այդպէս չէ: Այժմ մի հնչիւնը փոխանակ մի գրութեամբ գրելու, գրում են երկու, երբեմն երեք և աւել գրութեամբ:

Այսպէս՝ ուսուց Ե-ի գիմաց մինք ունենք վ, ւ, ու: Օ-ի գիմաց՝ օ, ու. եւրօպական Է-ի գիմաց՝ է, յ և այլն, որոնք չափազանց դժուարացնում են ուսուցման գործը:

Ուղղագրութեան գործը առանձին ժամանակ չըպիտի խէր մանկավարժից, այլ բոլորովին զուգընթաց պիտի դնար ընթերցանութեան ուսուցման հետ. այնինչ այժմ երբ մեր աշակերտները ուսուցման արդէն

առաջին տարում կարողանում են ուղիղ կարգալ, ուղիղ գրելը յաջողում է նրանց մի քանի տարիների ծանր աշխատանքներից յետոյ:

Հին ուղղագրութիւնը իւրացնելու համար մեր աշակերտութիւնը անհամար ժամեր է նւիրում. բոլորովին ապարդիւն աշխատանք, որ կարելի էր աւելի օգտակար կերպով գործադրել:

Նոր ուղղագրութեան անհրաժեշտ կարիքը շատերն են զգում, բայց չգիտեմ ի՞նչու, բոլորովին անիրագործելի մի բան են համարում այդ:

Իրաւ է, որ նոր ուղղագրութիւնը չի յաջողել Ֆրանսիացիներին, անգլիացիներին, բայց յաջողել է գերմանացիներին և կատարելապէս յաջողել է մեր դրացի վրացիներին:

Վրացիք վերայրին իրենց ուղղագրական դժուարութիւնները այն աստիճան, որ այժմ մանուկները հէնց պատրաստական դասարաններում անսխալ են գրում:

Նոր ուղղագրութիւն յօրինելը ծանր չէ բայց նրան տարածելը և ընդունել տալը չափազանց դժուար է և յամենայն դէպս առանձին մի անհատի գործ չէ, այլ մի հեղինակաւոր հիմնարկութեան:

Նոր ուղղագրութիւն կազմելիս, պէտք է աչքի առաջ ունենալ երկու հաւասարաչափ կարևորութիւն՝ շնչացող հանգամանք—աչքի առաջ պիտի ունենալ, նախ՝ արդէն գրել կարողալ իմացողների և ապա աշակերտութեան շահերը:


Առաջինների շահերը պաշտպանուած պիտի համարել, եթէ մենք նոր տաւեր, նոր գրութեան ձևեր չհնարենք, այլ եղածները մէջ միայն ընտրութիւն անենք. իսկ վերջինների շահերը այն ժամանակ, երբ նրանց ձեռքը կտանք մի հեշտ ուղղագրութիւն, որոնք փոխանակ 5-6 տարի չարչարելով ուղղագրական արհեստը ձեռք բերելու, բոլորովին աննկատելի կերպով ձեռք կբերէին նրան զուգընթաց ընթերցանութեան հետ:

Հայ նոր ուղղագրութիւն կազմողը պիտի լինի մի հեղինակաւոր մարմին, մի համագումար, բաղկացած մանկավարժներից, լեզուագէտներից, գրականագէտներից, մասնակցութեամբ էջմիածնի ներկայացուցչի, որ ընդունելի լինի ամենքի կողմից, ընդունելի պաշտօնապէս և դասաւանդելի դպրոցներում:

Մինչ այդ մասնաւոր անհատներ կկարողանային ապագայի համար միայն նիւթեր առաջարկել:

ԹՈՄԱՍ





ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ
(ԳՍԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ)

ՆԻԷՐ ՏՍՈՒԵՐԻ ԳԻՒՏԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ


Սրբանւէր գազաթին
Այրարաւեան մեծ լեռի,
Նոյ նահապեան պեղարդ
Արձանացած մեկուտի:
Փայլակնացայտ ամպերից
Աւետաւոր ձայն հնչեց,
Լոյս թափելով չորս կողմից
Այսպէս խօսել սկսեց.
Տե՛ս՝ այս աշխարհ բազմազան
Գեղանկար պատկերով
Իմ ձեռագործ աննման
Քեզ մեծ պարզե գարերով:
Եւ լուսափայլ վե՛ն գէմքին
Նահապետին ուկնդիր,
Զեփիւռ խաղաց մարմանդին.
Լայն ճակատին բարձրադիր
Եւ աչքն աշխարհ շուռէ շուռ.
Դառնայ գէպի արեւը
Եւ անդրանիկ արփենու.
Լոյսն ողջունի կենսատու:
Եւ սա եղաւ առաջին
Մեծ փրկութեան վե՛նավայր
Ու այստեղից մարդկութիւն

Լցրեց նորից ողջ աշխարհ:
Յօգով, շողով Արարատ
Ճառագայթիւր դու կրկին,
Նրկնապարզե լոյս անհատ
Լոյս խաւարած աշխարհին:
Արձագանդեց Արարատ
Աշխարհակուլ հեղեղի
Յաւերժ վիայ դարաւոր
Յոյք թափելով բիւրաւոր,
Եւ բիւրաւոր ցոյքերից
Վսեմախո՛ս վե՛ն Մեսրոպ
Աչքն անթարթ մէկ կէտի
Գար երևան հեռուից:
Մշտամուռնչ ծնկաչոք
Միայն շրթունքն են շարժում,
Սիրուն աչքի բիրերում
Ասես կրակ է վառում:
Տեսիլք, անուրջ է արդեօք,
Թէ քաղցր քուն գիշերի
Եւ ի՛նչ պատկեր հրաշալի
Տեսնում է նա առ սչօք:
Ճարտարի ձեռքը հօր
Քանդակում է անտաշ վե՛մ
Զայնաւորներ ա, ե, ի,
Մեսրոպեան գիւան է գրի:



1913

ԱՌԱՔԵԼ ԲՈՒՆԵԱԹԵԱՆ



ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆ

ՀԱՅՅԵՐԷՆ ԲՈՒԿՎԱՆԵՐԻ ՊՐԱԶԳԵՆԻԿԸ

Մին իրիգուն Իվան Արտեմիճը Իլիա Մակարիճի հետ տուս իին էկէլ կանաւի կրող ման կալի: Եստ չարը պարի պաների վերէն խօսելիժ ետով՝ եփ անց իին կանրմ Աղարարըժկի շկօլայի գրմանիժ, Իլիա Մակարիճը ասու:

— Հէյ գիդի ժամանակ, ինչ՞ մարթիգերք էն իլէր տոաչները, էն լուսահոքի Աղարարըժը ինչ խելօք պան ա արիլ գան, էս հոգ ասկերի մէջը՞ հայի յուսումարան ա շքնել, ինչ ա՞—հայի լիգուն, հայի անըմը մնայ, չի կորչի, մլադեժ մարթ: Տու ինձի ա՞ սիր, հաշտարխանցիներից յճվաօլկը ստեղ կիլ չի կարթիլ: Էթէ քիչըմիչ հայերէն պան հասկանողներ կան՝ էն էլ սրա հունարն ա, բալամ: Ա հիմի ետ ԵՕ, հիմի բալամ ամմէն պան փոխելա:

— Էլի մի ասիր, ասու Իվան Արտեմիճը, հիմի բալամ տա մօղիժ ինգելա, հիմի սխչով գեմնադի, բեալնի են կընըմ, փոզն էր տալիս էն գան. մեր վախտերքը սկի էս պաները կանր. բայադի սաղմոսն էր, ժամակիրքը: Հիմի խօ էս պաները փոխուա՞՞ հայերէնն էր ա պրծել: Հայերէն ասամ. Իլիւշ, սկի խարա՞ր էս, որ էս տարի հայերէնի իւրիլէյն ա՞:

— Ինձաղը՞

— Իւրիլէյը: Փսագի քսանը հինգ տարի կատարիլ լըսել էս, հիցսուն տարի կատարիլ լըսել է՞ այ

նրանց ասըմ էն իւրիլէյ. հէնց էնքէս էր հայի բուկվաներ քըթնելի հաղարըհինգհարուր տարւայ իւրլէյն ա. հասկացար:

— Ձէ, չեմ հասկանըմ բալամ. բուկվայի իւրիլէյը յճրն ա, ես ինչպէս պէտք ա կատարեն: Ախըր դէ փսագինը իմացիլ էմ, իմանըմ էր էմ ինչպէս էն կատարըմ—մարթը կընգան զալի ուղլայըմ նըստացնըմ էն ինչպէս հարսանիգ քշերը, ստօլը պացըմ էն, ինգնըմ էն կոնաղները խալաթ քաշելի, յով ոսկիեղէն, յով արծաթեղէն, էտով շանաղանակին էն պացըմ, շնաւորըմ էն սխչով, նրանից հոը բայադի վիչըրն ա սկըսըմ: Ա տու հիմի ասըմ էս բուկվայի հաղարըհինգ հարուր տարի էն կատարըմ, տա յմի կը կատարի ես ինձաղ էն կատարըմ:

— Տու էլ, Իլիւշ, բէզի բէզի վախտ, էնքէս միտիդ ախպէրս էս տանըմ, որ կասես սկի մին գանա պան ոչ լըսել էս, ոչ իմացիլ. դէ լըսիր թարիֆ անեմ. մեր Ստեօպան ախըր հայի կաղէթ ա ստանըմ, ընտեղ սխչը կրած ա: Ասըմա քի եփ մեր կրիքոր Լուսաւորիչը էչմիածինը շքնաւ՝ հայերն էր ինգան ժամ ման կալի, բրիտոնեա իլան՝ առաչին տէրաէրնըր գրեկներ, այսօրինըր իին. չունքի հայերիժ հէլէմ հոքաւորական չկար: Դէ ինքըտ ասիր, Իլիւշ, այսօրի լիգուլով պան կարթեն հայը կը հասկանա՞:

— Յմի ա իմանըմ, Վանեա, բէլքիմ կհասկանային էլ. ասըմ էն ախըր որ էն վախտըւայ հայերը այսօրինըր էն իլեր:

— Հէրիք ա չի, տու եր արայների պաներ էս

խօսում. ի՞նչ այսօրի, քեզի ասում էմ հայերը: Դէ էնա, աղաջանըս, նրանք կարթում էն իլէր, ժամ էն ասում իլէր՝ սրանք մին դանա պան չեն հասկանում իլէր: Հե- լէմ յուսումնակիչ հոքաւորականներ չեն իլէր:

— Եազոս Սեմնարի չեն մըտել:

— Ազան, էն վախա սեմնարի ա իլէր, քեզի ասում էմ, որ հէլէմ բուկվաներ չի կային:

— Հա, օղորթքի. հաճի:

— Ետով, էնա որ մին դանա մենձ յուսումով մարթ ա իլլում, անրմը Սուրբի Մեսրոպ. սա շատ էլ Աստուածավախ ա իլլում, կընըմա վարթարէթ ա տառ- նըմ: Եփ տեսնումա, որ իրա կարթածը խալխը չեն հասկանում՝ ինչնրմ ա նրանց համար պերեկօղով քա- ըող ասելի: Դէ արբըր էստուրը փոքը էր, տա հա ա- սում, ա էնմիճները, էնմին վարթարէթները չեն կա- բանըմ: Դէ սա ինչնրմ ա միտք անելի էստուր վե- ըէն: Էն վախաը հայի կաթղիկոսն էր Սուրբի Սահազը: Էս Մեսրոպը միտկ ա անըմ ինչպէս անի, որ հայերը հայերէն կրած բուկվաներով կիր ունանան, իրանց լեզույով ժամ անեն:

— Մլազեմ մարթ, տեսնեմ էս ինչեր ա միթք արել, սասա Իլիա Մակարիճը, իրա հոքիի դարշուճն կկա էս լաւութունը:

— Սպասիր մին, պանըս անգաջ արա դան, պա- դասխանաւ. Իվան Արտեմիճը: Էն ա էս Սուրբի Մես- րոպը կալիս ա իրա միթքը թարիֆ ա անըմ Սահազ կաթղիկոսին: Սա էր շատ ուրախանըմ ա, թարիֆ ա անըմ մեր թաքաւորին:

— Յովի՛ն.

— Մեր թաքաւորին. մենք էն վախտերքը հէլէմ թաքաւորներ ունիինք:

— Սուկըտ շաքարով, Վանեա, սաս պաժալըստա, հազոս մեր թաքաւորները պըրծան:

— Վասըն մեր անմիապանութունի պատճառով: Հիմի սաքի շատ մենձը փատիզ կայ, որ էն վախտը իլէր. սիչով ուզում իին թաքաւոր իլէրի. մախլաս, մենք մեր խօսկը խօսենք: Էնա թարիֆ ա անըմ թա- քաւորին. թաքաւորն էր շատ ուրախանըմ ա:

Միթք էն անըմ, միթք էն անըմ ամա պան տուս չի կալիս: Վերչը Սուրբի Մեսրոպը ազօթք ա անըմ Աստուած Ամենակարողին, Աստուած սրա միթքը, պաց ա անըմ, տա ինչնրմա կամանց, կամանց հայե- րէն բուկվաները կրելի: Կըրմա, պըրծընըմա. իրա կրած—սարքածը պերըմ կաթղիկոսին, թաքաւորին շանց ա տամ. սրանք շատ ուրախանըմ էն. վրազ Աստուածաշունչը, ժամի կիրիք—շարականները պերե- վօզ էն անըմ հայերէնի, կըրմ էն հայերէն բուկ- վաներով. ինչնրմէն ժամերըմ հայերէն ժամ ասելի պատարագ անելի. շխօլաներ էն պաց անըմ, էրէխերք էն հաւաքըմ, ինչնրմ էն հայերէն յուսում տալի. էս- պէս կամանց, կամանց պանը դարշու հա կընըմ:

Այ էս՝ տօնն էն կատարըմ էս տարի:

— Այ, հիմի հասկացում, սասա Իլիա Մակարիճը, դրխտ որ պարծանքի պան տ. էսքան հարուբաւոր տարիներ առաջ մեզամար միթք անողներ, մեր լե- զուն պացողներ էն իլեր: Ամա էթէ էս խալխը հիմի վեր կանային, տեսնիին հիմիդւայ խառնութունը, տես- նիին, որ մենք իշպէս հայերէն էնք խօսըմ՝ ի՞նչ կասիին տեսնա: Հը՞, ի՞նչ էս ասըմ:

— Ինչ պէտք ա ասեմ, սա որ կան, մարթ պէտք ա ինքը հասկանա, ամեն մին ասկ ունի լիզու, ունի հաւատ ունի յուսումարան, կիր. էթէ էս կրթողի, էն կմոտանայ, նա կամանց—կամանց կպրծնի, կկորչի: Հա-

զար հինգհարուր տարի առաջ, հայերէն ունանալի, հա- յերէն իմանալի համար ջան էն մաշել, քշերներ չեն քնել, միթք էն արել, ուրախութուն, պարծանք էն հա- մարել ունանալը, ա հիմի կոպէկով չեն առնըմ, սիչով հայերէնը թողած, իրանցը մոտացած՝ բուշ լեզու էն խօսըմ:

— Դէ տու հիմի, Վանեա, ինձի ասիր, սասա Իլիա Մակարիճը, մեզի սկի իրելէյ կօտարելի հա, արբըր թէ որ էն վախա այսօրէրէն իին կարթում, պան չիին հասկանըմ, հիմի խօ հայերէն կարթելից էլ պան չեն հասկանըմ, հա խօ սկի հայերէն էլ չէն կարթըմ. էլ ի՞նչ իւրելէյ. հա էնրէս էմ կարծըմ, որ մին փոքը ամօթ ա, այլասկը որ հարցնի ի՞նչ իւրելէյ ա, և էր տեսնի որ հայերէն չենք խօսըմ, չենք իմանըմ, չի ծիծաղիլ: Հէ՞, ի՞նչ կասես:

Տու բալամ, սովեհմ ճոկ պան տար. էստուրի վերէն պէտք ա միթք անելի. խելքի մօտ ա ասածդ: Իւրելէյն էր հարգաւոր ա, ասածըտ էր դրխտ ա. հիմի ի՞նչպէս սազը բազ պերէնք: Մին միթք կանենք, տես- նենք: Կնանք հէլէ:

— Կնանք:

Դէ-ԲԵՍ



Պերճ Պոռշեան

ԳՐԻ ՈՒ ՏՊԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

(Ալէքսանդրապօլի բարբառով)

Ծօ, Մկօ, իմացէր էս օր մեր թառ շալոզ Գօ- գորին թեղիգրամով կանչեր էն Հաշտարխան շալխու համար:

— Օղորդ Յակօ, ինչ կսես, ընչա՞ համար էն կանչէր, հարսնիք է ի՞նչ է:

— Չէ՞, սօ ի՞նչ հարսնիք, ի՞նչ բան, կըսեն թէ մենձ հանգէս էն սարքեր ընտել:

— Ախր վճօ է կանչեր, ընչա՞ համար:

— Տեսնեմ կը օր դու հեշ բան չես հասկնար, գլխիդ շատ հասա է, էն օրը «Ախուրեան»ի մէջ գրած չէր օր Հաշտարխան թագաբուք են տեսէր, դեռ հլա գարնանէն, ու յօրեկան պրտի կատարեն մեր ազգի գիր ու դալմի, տպի հմար, էդոր հըմար էլ ըստից ուստա Գօգորին վազ կանչեր են:

— Հա, ծօ լաւ ըսիր հմի հասկըցայ, կեցցին ազրէր, Հաշտարխանի հայերը օր էդպէս ազգասէր են ես Յակօ, տէյ հմի գիտէի թէ Հաշտարխան հէջ հայ շկայ, էդածններն էլ բիտաուն ուսաների հեա խառնուրդ են, հէջ հայէվար խօսել էլ բիլա չիտին:

— Տօ ախմախ, բանից բէխարար ի՞նչ կխօսիս, կերևի դու հէջ գազէթ չես կարդա, չէ՞ որ ընտեղ զօջա առաջնորդ կայ, կոնսիստոր կայ, եկզամինէն էլաժ տէրաէրներ կան, հրա էդոնք սւմ հըմար են, օր էդպէս բաների գլուխ չքաշին: Գիտես Մկօ էդ ինչըդ տօն է թէ չէ, անկաջ էրա թարիֆ էնէմ, մեր տղերքը օր կարդալ գրել գիտեն, մեր տէրաէրները ժամը օր կ'կարդան գիրք ու աւետարան, մեր գազէթները օր կ'գրեն գիտուն մարդիկը, էդոնք բիթուն գրի հունարն է, ու էդ տօնն է օր կ'կատարին: էդօր հմար էլ մեր թաժա կաթըղիկուսը ամեն տեղ գրէր է, օր հայերը փարա ժողովն գրկին էջմիածնի կասը գցին, օր յետե էտոր շահը գեղերի քեասիր ուսումնարաններին տան:

— Ետա լաւ միտք է ես ու իմ Աստուած, թէ օր գլուխ դայ:

— Հլա ընձի ըսա թէ գիրը հըբա վսով է հունարէ:

— Գիրը գիտես վով է հունարէ. ես իմ օգորմած հոգի վարժապետէն իմացեր իմ, օր Սուրբ Մեսրոպ վարդապետն է գտէր: էա վարդապետը, մեռնիմ էնօր ս. գերեզմանին, շատ սուրբ, գիտուն վարդապետ է եղեր, շատ շալիշ է էկէր օր գիր գանի, Աստու կարող զօրութիւնով էրազի մէջ էնօր հրեշտակը կերեայ ու կըզրէ, 1500 տարի է անցեր էդ վախաւանից, հիմի էդպէս վարդապետ ուր է օր, էդտից յետե գիրն օր գտան, խելքով մարդիկ տիպն են ուսնար է, էս էլ 400 տարի յառաջ է էկէր, հիմի մենձ խարջեր կենեն յօրեկան կասրքեն, սաղ քաղաքը թոփ կեղնի մէ տեղմ, էլ բազրցեան գանդին աղա մարդիք ըսիմ, էլ գինեաթքեարներ, էլ տէրաէրներ, վարժապետներ, վարժուհիներ ըսեմ չի մնայ բիրադի կեղնին ճառ կ'կարդան, թառ ու քեամանչով, գուխօվով պար կ'խաղան, ուսնդիկ աղջիկները պօլթալամիշ կեղնին ու յետե կ'ցրւին իրանց տները: Մկօ, գիտես մենակ խօ Հաշտարխանը չէ օր հունգէս է սարքէր, ուրիշ քաղաքներ էլ, ուրտեղ գուտր հայեր կան էնոնք էլ հանդէսներ կենին: Հա, օգորդ գազէթի մէջ գրած էր օր մեր էջմիածնայ ճեմարանն էլ մենձ հանգէս կեղնի, ճառեր կ'կարդան:

— Էրնէկ էն աչքերին օր էդ օրը էջմիածին էդ բիտթիւնը կ'տեսնի, ճառերը խօսքերը կ'իմանայ:

— Է՛հ, Մկօ բանըմ ըսեմ, էդ գիտունների, վարդապետների ճառ ու մտքը բիթուն ի փառս մարդկան է, ու փարի գլխուն է, փարա գուզին, փարա, փարա հա փարա... հմի էն գարն է օր մեղի պէս քեասիր քիսուսներ կերան աշուղ չի էղնի, ես մէ բանմ լաւ գիտեմ, օր մեր ազգը աշխրբքի երեսէն չի կորի հէջ մէ ժամանակ, քանի օր գիր ունի:

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՍԱՆՕԵԱՆ



Աստրախանի անդրանիկ հայ լրագրի տաղին համարը

ԱՍՏՐՈՒՆԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ «ԼՐԱՔԵՐ» ՀԱՅ ԾԱԲԱԹԱԹԵՐԹԸ

Ի՞նչի արդիւնք էր «Լրագրերը»: Այդ հարցին պատասխանելու համար գիմենք թերթի անդրանիկ առաջնորդըին:

«Փրկարար շարժումը տակն ու վրա անելով ամբողջ հասարակական կազմը, արմատական կերպով փոխեց թէ հասարակութեան և թէ նրա հիմնարկութիւնների բնաւորութիւնն ու կեանքը...»

Երեան եկան նոր հոսանքներ, որոնք շարունակ մէկը միւսին փոխարինելով, իրենց հետեից էին տանում հասարակութեան այս կամ այն մասը:

Ահա այդ օրից սկսած՝ հասարակական կեանքի կենսաթրթիւ խնդիրները լուսարանելու համար աւելի ևս զգալի եղաւ տպագրական խօսքի բացահայտութիւնը մեզնում»:

Ահա այդ զրութիւնը ստիպեց մի խումբ բահանների և երիտասարդների (թւով վեց) 1907 թւի, գեկտեմբերի 3-ին մասնաւոր բնակարանում նիստ կազմել և որոշումն անել—Աստրախանում հրատարակելու մի շարաթաթերթ: Այդ համակրելի միտքը իրագործելու համար հիմնադիրները ձեռնարկեցին առաջին նախապատրաստութիւններին:

Մինչև «Լրագրի» երեան գալը, Յովսէփ Արդութեանի հիմնած տպարանի հետքն անգամ չէր մնացել: Տեղական ուս տպարաններում չկային հայոց

տառեր և կի՛ն կային, այն էլ այնքան քիչ, որ միայն հայերէն այցեւորներ էին տպում:

Մի քիչ աւելի քանակութեամբ տառեր ունէր ռուս Սիմեոնովի տպարանը, այն էլ շատ սահմանափակ չափով, հին ձեռի, բոլորովին մաշուած և կարծուած է, որ այդ պիտի լինէր հայկական տպարանի մնացորդը: Միւս գժւարութիւնն էլ այն էր, որ Աստրախանում հայ գրաշարներ չկային, ուստի խումբը որոշումն արեց նոր տառեր բերել տալ:

Տփլիսի Մադերի ձուլարանին պատէր արւեց 20 փութ երկու տեսակի տառեր, որի համար հարկաւոր գումարը՝ 600 ռուբլի, հիմնադիրները ձեռք բերին Աստրախանի, գործին համակրող, վաճառականների մէջ ժողովարարութիւն անելով: Միևնոյն ժամանակ հրաւիրեցաւ մի հմուտ գրաշար Տփլիսից:

Սկզբնական այդ երկու գժւարութիւնները հարթելուց յետ, պատասխանաւոր խմբագիր հրաւիրեցաւ երիտասարդ վաճառական Կարապետ Սաշատրեանը:

Ան այսպէս «Լրարեր»ի անդրանիկ համարը լոյս տեսաւ 1908 թւականի ապրիլի 27 ին, կիրակի օրը, օրաթիւթի դիրքով: Տեղացիների համար բաժանորդագինն էր 3 ռուբլի, իսկ գրսի բաժանորդների համար 4 ռ:

Թերթը անկուսակցական էր, սակայն որոշ ուղղութեամբ:

«Լրարեր»ի լոյս տեսնելը նորութիւն էր Աստրախանում, ուստի որոշ չափով հետաքրքրեց հայ ընթերցանութիւնից խորթացած տեղական հասարակութեանը և վճարող բաժանորդների թիւը հասաւ մինչև 170:

Հաշուելով հատավաճառը և նւէրները, «Լրարեր»ը քաղաքումս տարածուած էր 200 օրինակից աւելի: Մի այդքան էլ ցրում էր գաւառներում, ուրեմն ընդհանրապէս տարածուած էր 400 օրինակից աւելի, և խրաքանչիւր անգամ տպագրուած էր 500 օրինակ: «Լրարեր»ը բացի իր տեղական աշխատող ոյժերից, ունէր և իր մշտական աշխատակիցները Մոսկուայից, Տփլիսից, Բաքուից, Երևանից, Անդրկասպեան աշխարհից, Ղզլարից, Մոզդուկից, Ստաւրոպոլից Թաւրիզից, Վանից, Բուլղարեայից և այլն:

Լրագիրը իր գոյութիւնը պահպանեց 1908 թ. ապրիլի 27-ից, մինչև 1909 թի հոկտեմբերի 18-ը: Ուղիղ տարի ու կէս գոյութիւնից յետ, թերթը դադարեց:

Թերթը սկզբում տպագրուած էր ռուս Ս. Ն. Սիմեոնովի շոգեշարժ տպարանում, ապա տառերն ու թերթի տպագրութիւնը փոխադրեց Ա. Ապրեսեանի նորաբաց տպարանը:

«Լրարեր»ի տարեկան բիւզջէն համնում էր մօտ 1800 ռ. որպիսի ծախսը և մահարեր եղաւ լրագրի համար և դադարեց. սակայն տեղը բաց մնաց:

Այդ բացը լրացնել կամեցաւ տպարանատէր Արէլ Ապրեսեանը: Հողը պատրաստ էր, կային «Լրարեր» տառերը և սեպհական տպարան: «Լրարեր»ի դադարելուց ուղիղ մի տարի անցած՝ հետեւալ 1910 թի հոկտեմբերի 24-ին Ապրեսեանը իր խմբագրութեամբ լոյս ընծայեց «Մեր Կեանքը» պատկերազարդ շաբաթաթիւթի առաջին համարը, քառածալ դիրքով. բաժանորդագինը Աստրախանում 3 ռ. դուրսը 4 ռ:

Այդ մի փորձնական համար էր, որ այլ ևս չշարունակեց:

Հետեւալ 1911 թիւն Ապրեսեանը դարձեալ մի այդպիսի համար լոյս ընծայեց և դարձեալ դադարեց, մինչև որ 1912 թիւ մարտի 11-ից «Մեր Կեանքը» սկսեց կանոնաւոր հրատարակել օրագրի ծաւալով և առանց պատկերների:



Այս անգամ «Մեր Կեանք»ի շուրջը գումարեցան մի խումբ երիտասարդներ, որոնք կամենալով թերթը հաստատուն հիմքերի վրա դնել, իրենց միջից ընտրեցին երկու կազմ—խմբագրական և անտեսական. սակայն այդ ջանքերն ևս չօգնեցին և «Մեր Կեանքը» 22 համար տալուց յետոյ, նոյն թիւ օգոստոսին բոլորովին դադարեց:

Թերթը համեմատելով «Լրարերի» հետ աւելի քիչ ծախս ունէր, նա տպագրուածէր սեպհական տպարանում, շարուածէր ոչ յատկապէս ուրիշ քաղաքից հրաւիրած գրաշարի, այլ Տէնց տպարանի ռուս գրաշարներից մէկի ձեռքով, որ սովորել էր հայերէն շարելը, և շարուածէր շատ յաջող: Տպագրուածէր 200 օրինակ և գլխաւորապէս տարածուած քաղաքում: Վճարող բաժանորդներ գրեթէ չուէր:

Դարձեալ մեր առաջն է նոյն բացը և սաստիկ զգալի է ջերմ, շիտակ, զօրեղ գաւտտական թերթի բացակայութիւնը Աստրախանում:

Ո՞ր ևս տպագրական խօսքի ապագայ մարդարէ, արի, քեզ է սպասում հրապարակը:

Հսկտ. 11.

Գ. ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ





ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԻՇՈՂՈՒԹՒԻՒՆՆԵՐ

1905 թվականն էր:

Այն տարաբազդ տարին, երբ դարերից ի վեր կովկասում ապրող հարևան ազգերը, ինչ որ չար ոգու գրգռմամբ, խելքները կորցրած՝ ջարդում էին իրար և աւերում միմիանց տները:

Ես ապրում էի Կարուզա նահանգի մի խուզ գիւղում:

Հինգերորդ տարին էր, որ ես այդտեղ էի: Միակ հայերը, սրանց ես տեսնում էի, դա շրջակայ փոքրիկ քաղաքներում հատիկ հատիկ ընկած արքայական հայերն էին:

Ձեք կորոզ երևակայել թէ որքան ուրախութիւն էր մեզ համար, երբ մենք երբեմն երբեմն հաւաքւում էինք միասին. այդ պատանում էր մեծ մասամբ Չատկի և Ծննդեան տօներին:

Որքան քաղցր էր մեզ համար մայրենի լեզուն, որքան տնուշ էր մեզ համար հայրենի յիշողութիւնները, ինչ անյազ փափագով ստանում ու կարգում էինք հայ թերթերը:

Պատահեց մի անգամ հէնց այդ 1905 թւին, Սմոլենսկի մօտ մի գիւղաքաղաք էի գնացել, մոռացել եմ անունը, անցնումէի փողոցով, տեսնում եմ զանձակեցի թուրքի մի տիպիք դէմք:

Մօտեցայ և հարցրի թէ սրտեղացի է և ի՞նչ է շինում այդտեղ:

Թուրքը մի բոսիկ շարած, երեսիս նայեց. և յետոյ արտասուքը աչքերին՝ փաթաթեց ինձ:

Ազն, հինգ տարի է այստեղ եմ և ոչ ոքին չեմ տեսել մեր կողմերից. ոչ ոքի հետ չեմ խօսել մեր լեզուով. այդ քեզ սրտեղից Աստուած հասցրեց:

Աքսորւած էր. ի՞նչու է ոչ քաղաքական: Միրք էր ծախում և մի կերպ գլուխը պահում: Տարաւ իր մօտ. ստիպեց թէյ խմել. փլաւ եփեց և ուրախութիւնից չգիտէր ինչ անել:

Մինչև երեկոյ խօսումէինք: Պատմում էինք զարդներս իրար:

Յիշումէր հայրենիքի գեղեցկութիւնը, նրա պտղաբեր հողերը, նրա այգիները, քաղցրահամ մրգերը և ջրերը...:

Հեռացանք իրրե մտերիմներ: Որքան քաղցր էր մեզ համար մեր հայրենիքը, որքան քաղցր էր հնչում ամէն մէկիս ականջին իւր մայրենի խօսքը...:

Իսկ հետոն... բուն հայրենիքում մեր եղբայրները իրար միս էին ուտում, իրար տուն էին քանդում:

Ինչո՞ւ...

Ի՞նչ էին արել իրար:

Ի՞նչ ունէին իրար մէջ բաժանելու:

Այն, օտարութեան մէջ միայն, հեռու օտարութեան մէջ, ուր ոչ մի խօսք չես լսում դու քո մայրենի լեզուով, ոչ մի դէմք, ոչ մի գծադրութիւն չէ յիշեցնում քեզ քո հայրենիքը. այդտեղ միայն դու զգումես թէ որքան թանկ է քեզ համար մայրենի լեզուն, հայրենի յարկը, նրա սուրբ օջախը...:

Անցան տարիներ...:

Յիշեցի նորից ես այդ օրերը, երբ մեզ մօտ էլ Աստրախանում, իմացայ որ պատրաստում են հայ գրի և տպագրութեան մեծ յօրհիանները տօնելու:

Եւ զիտէք ինչո՞ւ:

Ինչո՞ւ, մտածում էի ես, մենք մեր տանը, մեզ մօտ այնքան, անփոյթ և անհոգ կերպով դէն ենք շարտում մեր ամենից թանգագին գանձը, մեր լեզուն, որը այդքան մեծ ջանքերով և զոհերով մեր նախնիքները մեզ են աւանդել:

Մենք նայում ենք և նայում ենք բոլորովին սառն ու անտարբեր թէ ի՞նչպէս մեր մատաղ սերունդը, մեր երիտասարդութիւնը աւելի և աւելի օտարանումէ, խորթանում է իւր մայրենի լեզուից:

Ինչո՞ւ:

ԱՐԵՎ ԱՊՐԵՍԵԱՆ.





Լուսանկար Ն. Սուջայեանի Այս շէնքի աջ կէտում տեղաւորւած էր հայ տպարանը. ձախում՝ նախկին հոգևոր ծխական դպրոցը

ՍՍՏՐԱԽԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՏՊԱՐԱՆԸ

Յիրաւի ծանր տպաւորութիւն է անում այն հանգամանքը, երբ մի անցած իրողութեան առիթով պատմական տեղեկութիւն կամ անցեալից մնացած մի հետք եւ որոնում և չես գտնում:

Այդ կողմից ևս Աստրախանը կատարեալ անապատ է ներկայացնում:

Ոչ մի յուշարձան, ոչ մի յիշատակարան չէ մնացել, որ անցեալը յիշեցնէր ու անցածի մասին տեղեկութիւն տար:

Աստրախանի հայոց կոնսիստորեայում կան մի երկու վախ մատեաններ, որոնք կազմում են Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի ձեռագիր յիշատակարանները և զրանք ևս շատ քիչ բան են ասում անցածի մասին: Իրանք հանդուցեալ արճիի աւելի վիճակային սուրբի մատեաններն են քան յիշատակարանները և եթէ պարունակում են պատմական տեղեկութիւններ, այն էլ զանազան քաղաքների, եկեղեցիների հիմնարկութեան և օժման թւականներ են:

Մի քիչ աւելի է կանգ առած Պետերբուրգի ճանապարհորդութեան ու այնտեղի տեսակցութիւնների մասին Եկատերինէ Կայսրուհու և զանազան բարձրաստիճան անձանց հետ:

Ի՞նչպէս բացատրել այդ ամայութիւնը: Ականատեսներն ասում են, որ Աստրախանի ս. Աստուածածին ա. եկեղեցու զանգատանը զանազ փոքրիկ խցիկը հնում օրպէս թանգարան է ծառայելիս եղել:

Այնտեղ պահուելիս են եղել զանազան մեծութեամբ գրչագիր մատեաններ, յիշատակարաններ և բազմաթիւ թղթեաններ:

1852-թւին երջանկայիշատակ Ներսէս Վ-րդ կաթողիկոսի լիազոր վերահսկիչ Հասան-Ջալալեան արքեպիսկոպոսը Աստրախան այցելած ժամանակը, բոլոր այդ հնութիւնները տանում, տանում է իր հետ:

Աստրախանի կոնսիստորեան վերջն է հասկանում իր սխալը և երբ Գէորգ Վեհապետեան առաջնորդի ժամանակ հարցումն է անում այդ տարածների

մասին, սինոդից պատասխան է ստացում, որ այդ բոլոր մատեանները պահոււմ են Սանահնի վանքում:

Արդե՞ք չթոյլ տալ կործելու, որ այդ տարածների մէջ կան և գործեր Յովսէփ արքեպիսկոպոսի հիմնած Աստրախանի հայոց տպարանի վերաբերեալ, որի գոյութեան մասին տեղումս շատ կցկատուր տեղեկութիւններ են մնացել. համարեա ոչինչ:

Պատմապէս Լէօն գրում է, որ Յովսէփ Արղութեանը իր տպարանը հիմնում է Աստրախանում 1794 թւին, որ գոյութիւն է ունենում մինչև 1827—28 թւականները:

Այդ տեղեկութեան առաջին մասը շատ էլ ճիշտ չէ: Հիմնել է 1796-ին: Երեք տարի անցած՝ այդտեղ տպագրում է Վարդան Բարձրաբերդցու «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի հաստիկի գիրքը, որից հարիւր օրինակից աւելի մինչև օրս պահոււմ են կոնսիստորեայի պահարանում: Թուղթը ընտիր է, ախլը մաքուր, պարզ, տառերը գեղեցիկ: Այս է միայն մնայուն փաստար Աստրախանի հայ տպարանի: Իրքի առաջին երեսի վրա գրւած է:

«Հրամանաւ Սրբոյ Աթուռոյն Էջմիածնի Ծայրագոյն Նուիրակի, Հիւսիսային կողմունս եղեալ ամենայն ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի, Սանահնցի Երկայնաբաղուկ Արղութեան Իշխանազնեայ Տեսան Յովսէփայ՝ Պսակազգեաց Սրբազան Արք Եպիսկոպոսի»:

Այնուհետև առանձին գրւած է:

«Արղեամբ և ծախիւր ի Ղզլար բնակեալ բարեպաշտն և Մեծահաւատ՝ Լուսանոցի Յարութիւնի որդի՝ Պարոն Անտօնի Ծամախեցոյ: Յամի տեսան 1797, մարտի 24: Իսկ ի թւին հայոց ՌՄԽԶ:

Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեան: Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնայ Եկեղեցւոյն, որ ի Յաշտարխան»:

Այս տպարանում տպագրուել է նաև ժամագիրք, որի միայն առաջին թիւըն են տեսել, իսկ գիրքը, ինչպէս երևում է, արդէն գործադրուել, վերջացել է Աստրախանում:

Ինչ վերաբերում է Լէօի տեղեկութեան երկրորդ կէտին, որ իբր թէ տպարանը գոյութիւն է ունեցել մինչև 1827—28 թւականները, այդ ևս սխալ է: Այս բողոքէիս ձևերիս տակ ունեմ կոնսիստորեայի 1837 թւի մի գործ, որից երևում է, որ Սերովբէ Արքեպիսկոպոսը*) 1837 թւի մարտի 10-ին զիմում է Աստրախանի հայոց կոնսիստորեային հետեւեալ առաջադրութեամբ:

«Պարոն Զինուորական Գաւառապետն Աստրախանայ թղթով ի 4 մարտի Ձ 1035. ճանուցանէ ինձ, թէ ի տպարանի մերում տպին ուստերէն պէսպէս թուղթք և ինչպէ՞ գիմ անօրէնութիւն, զի մի այսուհետև յաճախեցին տպագրութիւնը ի ուս լիզու որոյ և իցէ տեսակի:

Ես օրինաւոր համարեալ զառաջարկութիւն Նորին Գերազանցութեան, հրամանագրեմ Հոգևոր կոնսիստորիայից զգուշանալ զի մի ինչ տպեցի ուստերէն այսուհետև տառիւք մերովք»:

Կոնսիստորեան էլ հիմնելով առաջնորդի թղթի

*) Ծանօթ. Սերովբէ արքեպիսկոպոսը ժամանել է Աստրախան 1832 թ. և 1847 թւի յուլիսին խօլերայով վախճանուել է: Թաղւած է Աստուածածին ա. եկեղեցու մէջ հարաւային պատի մօտ:

վրա, որոշում է ատեան կանչել «Տոգևորական տպագրիչ» Մկրտիչ Յովհաննէսեանին (երևի տպարանի կառավարիչ) և նրան զգուշացնել, որ ոսերէն ոչ մի տեսակի թուղթ չտպագրի մեր տպարանում, որը արգելւած է քաղաքիս կառավարութիւնից:

Այս բարբից երևում է, որ տպարանը միայն հայերէն տպագրութեամբ չէր գրադուած, այլ և ոսերէն:

Միևնոյն ժամանակ հաստատուած է, որ տպարանը ըստ Լէօի 1827—28 թւին չէ գազարել, այլ 1837 թւին անգամ դեռ ևս գործում էր:

Աւելին կասեմ—ականատեսներից մէկը, Գ. ք. Դադաշեանը պատմում է, որ ինքը 1847 թւին, փոքր հասակում, գնում էր Աստուածածին ա. եկեղեցու բակը գիր կարգալու և պարագմունքից պատ ժամանակը աշակերտների խմբով գնում էին տպարան «Մուկուշի» մօտ (վերև յիշուած Մկրտիչ Յովհաննէսեանը), տեսնելու թէ՛ ինչպէս է նա տպագրում: Այնուհետև ականատեսը աւելացնում է. «1848 թւին գնացի Լազարեան ձեմարան և երբ 1852 թւին վերագործայ, այլ ևս տպարանը չկար»:

Այսպէս ուրեմն՝ Յովսէփ Արքեպիսկոպոսի տպարանը գոյութիւն է ունենում Աստրախանում մօտաւորապէս մինչև 1850-ական թւականները և իր գոյութիւնը պահպանում է առաջնորդարանի ներքին յարկի կրպակների արդիւնքից, որպիսի շինութեան վերին յարկում տեղաւորւած էր այդ տպարանը և որը գրանուած է ս. Աստուածածին ա. եկեղեցու բակում:

Իսկ այնուհետև ինչ եղաւ այդ պատմական տպարանի վիճակը:

Դարձեալ ականատեսների պատմածով, տպարանի բոլոր իրեզնները, արկղ, արկղ տասերը, բոլորովին անխնամ ածւած էին առաջնորդարանի ներքին յարկի մի նկուղում, մինչև 1889—91 թւերին երեսփոխան Յովհաննէս Մեանիկեանը անպէտք և անգործադրելի իրերի շարքում վաճառեց նաև տպարանի թշուառ մնացորդները:

Գ. ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԾԻՒԱԿԱՆ ԵԿԵՂԵՑ. ԴՊՐՈՅԸ

Աստրախանի ծխական եկեղեցական դպրոցը, որ բացւած է եղել 1868-69 թ. ս. Աստուածածին աւագ եկեղեցու բակում, տարիների ընթացքում միղասեանից դարձել է երեքդասեան, իւրաքանչիւր դասարանը երկու տարւայ դասընթացով, թեմական (Епархiальное) դպրոցի անւան տակ:

Յիշեալ դրութեան մէջ դպրոցը պահել է միայն երկու տարի, 1879 թւին տալով 5 ընթացաւարաներ:

Աշակերտների սակաւութիւնը մի կողմից և նիւթական միջոցների սղութիւնը միւս կողմից, հարկադրել են դպրոցական հոգարարութեան՝ բաւականանալ երկդասեան և ապա մի դասեան դպրոցով, որը սակայն մի տեսակ բաշ տալով իր աննախնամների գրութիւնը, փակել է 90-ական թւերին:

Թեմական դպրոցում աւանդելիս են եղել՝ հայոց, սուսաց, ֆրանսիացոց լեզուներ, կրօն, բնական պատմութիւն, թւարանութիւն, աշխարհագրութիւն, հայոց, սուսաց և ընդհանուր պատմութիւն, հաշուա-

պահութիւն, զժագրութիւն, նկարչութիւն, և ձայնագրեալ երգեցողութիւն:

Դպրոցի ուսումնական մասը գտնուել է թեմական տեսչի ձեռքին, իսկ տնտես կանը հոգարարութեան: Պահպանութեան միջոցները կազմել են՝ սեպհական դրամագլուխ, եկեղեցական հասոյթներ և պատահական ներատուութիւններ: Դպրոցում ուսուցչութեան պաշտօն վարել են գլխաւորապէս՝ միջին կրթութիւն ստացած և քաղաքային ուսումնարանների ուսուցիչներ:

Աշակերտութիւնը եղել է առաւելապէս ժողովրդի հասարակ դասակարգից, որոնք ուրիշ տեղ կղժարանային ուսումնաւարձ վճարել:

Ն. ք. ԻԼԻԱՉԵԱՆ



Լուսանկար Ն. Մուջայեանի

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԳԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ

Աստրախանի հայոց օրիորդական դպրոցը բացւում է 1870 թւին Գէորգ կաթսկոպոս Վեհապետեանի առաջնորդութեան ժամանակ:

Այդ դպրոցում սկզբում բոլոր աւարկաները աւանդուում էին սուսաց լեզւով մինչև 1884 թ., երբ առաջնորդ Սուքիաս կաթսկոպոս Պարզեանը հոգարարութեան հետ կովկասից հրաւիրեցին դպրոցաւարտ ուսուցիչներ:

Այդ ժամանակ դպրոցը հիմնովին կերպարանափոխեց, աւարկաները սկսեցին հայերէն աւանդել և առհասարակ դպրոցական ներքին և արտաքին կեանքը կիսախալֆայական գրութիւնից անցաւ ժամանակակից դպրոցական սիւսեմին:

Գէորգ կաթսկոպոս Սուրենեանի (ներկայ Վեհափառ Հայրապետը) առաջնորդութեան օրով, դպրոցի առաջին պատրաստականը, որ սկզբում անջատ գտնուում էր ս. Կատարինէի եկեղեցու բակում, միացեց մայր դպրոցի հետ. բացի դրանից, երկրորդ և երրորդ պատրաստականները, որ ստաջ մի դասարանում էին տեղաւորւած, բաժանուեցին առանձին դասարանների, բացեց և չորրորդ հիմնական դասարանը, նախ իբրև մասնագիտական՝ կարուձեւի և ապա աւարկայական: Դպրոցից վերացեց ամեն մի ֆիզիքական պատիժ.

Ամբողջ տասնհակ տարիների ընթացքում արձակման ոչ մի դէպք չպատահեց. ոչ անյառաջագիմութեան և ոչ էլ վատ վարքի համար:

Աշակերտութեան թիւը հասնում էր մինչև 150 ի, որոնք զետեղուած էին 3 պատրաստական և 4 հիմնական դասարաններում:

Ուսման չափաւոր վճար վերցնուած էր միայն ունեւորներից իսկ չունեւոր աշակերտութեանը ճիւղապէս տրուած էր գասագրքեր, դպրոցական պիտոյքներ և հագուստ. իսկ ձմեռը նաև թէյ և նախաճաշ:

Արխատակէս կախիկոպոս Սիգրակեանի ժամանակ ուսուցչական խումբը հիմնովին բարեփոխուեց: Հրաւիրուեցին նոր սյժեր, որոնք թարմ հոսանք մտցրին դպրոցի նախկին միապաղաղ կեանքի մէջ, բայց այդ երկար շաւիղի և մինչ ընտրուած մասնաժողովը ծրագիր էր մշակուած վաղուցուց: Բազմապէս իրագործելու— դպրոցը վեցրասեան միջնակարգի վերածելու, նա անցաւ միջնակարգութեան ձեռքը և կերպարանափոխուեց համեմատ միջնակարգական դպրոցների ծրագրին:

Դպրոցը մինչև 1906 թիւը մնաց դիրեկցիայի իրաւասութեան տակ: Այդ ժամանակ բոլոր աւարկաները աւանդուած էին ուսերէն. հայերէն դասերի քանակութիւնը մնաց նախկինը (36 դաս շաբաթական) բոլոր 7 դասարաններում, որ կրօնի դասերի հետ միասին լիովին բաւական էին մայրենի լեզուն հիմնաւորապէս անցնելու համար:

1906 թ. օրիորդական դպրոցը կրկին անցնուած է հայ հասարակութեան ձեռքը և տեղափոխուած է նորաբաց սեմինարիայի շինութիւնը:

Այդ ուսումնական տարուած օրիորդական դպրոցի ու սեմինարիայի ուսուցչական միացած խմբերը հոգաբարձութեան հետ միասին կառնուելու գործունէութիւն ևն սկսուած. սակայն այդ գործունէութիւնն էլ սահմանափակուած է միայն մի ուսումնական տարուով— հետևեալ 1907 թ. միջնակարգութեան կարգադրութեամբ օրիորդական դպրոցը փակուած է, որև մնում է փակ մինչև այժմ:

Օրիորդական դպրոցը միշտ եղել է Աստրախանի հայ հասարակութեան սիրոյ և զուբգուբանքի աւարկայ: Հասարակութիւնը միշտ ուշադիր վերաբերմունք ունէր դէպի այդ հիմնարկութիւնը և ոչ մի միջոց չէր խնայում նրան պահպանելու և բարձրացնելու:

Հասարակութիւնը դեռ մինչև այժմ չի մոռացել իր սիրելի օրիորդական դպրոցը և նրա ջերմ փափագն է տեսնել նրան մի օր վերաբացուած, աւելի էլայն, աւելի ժամանակակից, ընդարձակ ծրագրով:

Նախկին Օրիորդական դպրոցի ուսուցիչ
Խ. ՂԱՄԱՐԵԱՆ



Լուսանկար Ն. Սուջայանի
Աստրախանի հայ արհեստական դպրոցի շէնքը

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՐԵՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Աստրախանի հայոց արհեստական դպրոցը բացուեց 1877 թ. ազբատաց հոգաբարձութեան ձեռքով, որ պիտի պահպանէր Միքայէլ Սահարեկեանի կտակած գումարի (22 հազար և դպրոցական շինութիւնը) սօղոսներով, սակայն այդ սօղոսները բաւական չէին ուսումնարանի պահպանութեան համար, ուստի հոգաբարձութիւնը ստիպուած էր իւր միջոցներից տարեց-տարի ծախսել հաւասարաշափ գումար:

Աշակերտները գիշերօթիկ էին: Թէև նրանց նորման 12 էր, բայց նրանց թիւը հասնում էր մինչև 18 ի, ընդունուած էին նաև երթեկներ: Դպրոցը ունէր հինգամիսյ դասընթացք, աւտրիկաները աւանդուած էին սուսէրէն. հայերէն դասերի թիւը շաբաթական 6 էր:

Սկզբում արհեստներից անցնում էին հիւսնութիւն և կօշիկակարութիւն, բայց շուտով վերջին արհեստը վերացեց սովորողների բացակայութեան պատճառով: (Աշակերտները ազատ էին մէկ կամ միւս արհեստը ընտրելու):

Տարիների փորձը ցոյց տուեց 1) որ դպրոցը աւարտող 14—16 տարեկան պատանիները անցնելով արհեստի մի տարեկան գասընթացք, անկարող են անկախ արհեստաւորներ դառնալ և 2) աւարտողների մեծամասնութիւնը կամ նորից մանուած էր Ազարաբեանի դպրոց և կամ ուղղակի ընտրուած էր իւր համար վաճառականական ասպարէզ, որ աւելի լաւ է վարձատրուած Աստրախանում քան հիւսնութիւնը և 3) մանուողների թիւը խիստ նւազեց:

Աչքի առաջ ունենալով վերոյիշեալ պատճառները, հոգաբարձութիւնը 1907 թիւին արհեստը բոլորովին վերացրեց, իսկ ուսման գասընթացք անցնելու համար աշակերտներին սկսեց ուղարկել Ազարաբեանի դպրոց և այս գրութիւնը շարունակուած է մինչև այժմ: Այնպէս որ արհեստաւորների դպրոցը փոխեց պանսիօնի:

Նախկին ուսուցիչ Խ. Ղ.



Լուսանկար Ն. Սուչայանի

ԱՂԱԲԱԲԵԱՆ ԴՊՐՈՅԸ

Աստրախանի հայոց Ազարարեան դպրոցը հիմնել է ջուղայեցի Աստրախանի Կարգի վաճառական Նիկողայոս Յովհաննէսեան Ազարարեանը:

Նա 1804 թիւն միջնորդութիւն է յարուցանում հայսեր առաջ և յայտնում է, որ իր եզրայրը իր մահւանից յետոյ 15000 ռ. է թողել բարեգործական նպատակով, ինքն էլ այդ գումարի վրա աւելացնում է 35000 ռ. և խնդրում է թոյլ տալ իրեն այդ գումարներով մի տուն կառուցանել, որի արդիւնքով երեխաներ սովորեցնել և այդ սովորող երեխաների կառավարութիւնը և հսկողութիւնը յանձնել հայր Անտոն վարդապետին:

Այդ առիթով Բարձրագոյն թոյլտուութիւնը ստանալուց յետոյ՝ 1910 թ. բացուում է դպրոցը «Ազարարեան» անունով:

Սկզբնական տարիներում դպրոցը լինում է անկազմակերպ և անկանոն մինչև 1838 թիւը, որից յետոյ Ազարարեան դպրոցը դառնում է գաւառային (уѣздное) դպրոց, որպիսի արիւնի մինչև այսօր:

Դպրոցի գոյութեան երկար տարիների ընթացքում պաշտօնավարել են իրրե ուսուցիչներ բազմաթիւ անձնաւորութիւններ, որոնցից կարելի է յիշատակել Յարութիւն վարդապետ Արամզարեանին, Սերովբէ Պատկանեանին (1810—22 թւականներում) թովմաս Տօտմեան (յայտնի անտեսագէտ Վահան Տօտմեանի հայրը 1860—1887), Յովակիմ վարդապետ Տէր-Գրիգորեանին, Թադէոս վարդապետ Տէր-Դանիէլեանին և այլն:

Համարեա բացման օրից սկսած Ազարարեան դպրոցը ունեցել է պանսիօն 12 աշակերտի համար, որը 1886 թ. միջոցների սղութեան պատճառով փակել է, իսկ 1896 թիւն նորից բացեց և գոյութիւն ունի մինչև այժմ:

Մինչև 1884 թւականը դպրոցի անտեսական մասն էլ կառավարելիս է եղել մանկավարժական կազմը իսկ յիշեալ թւականից յետոյ անտեսականի կառավարութիւնը յանձնուում է առանձին հոգարարձական մարմնի, որը ընտրուում է Աստրախանի հայերից:

Ներկայումս դպրոցը ունի երեք դասարան և մի պատրաստական, ամեն մի դասարանը երկու տարւայ կուրս է պարունակում, այսինքն՝ իւրաքանչիւր աշա-

կերս ամեն մի դասարանում պէտք է նստի երկու տարի:

Աւանդուում են հետեւեալ առարկաները—հայոց, ռուսաց լեզուներ, կրօն, աշխարհագրութիւն, թւարանութիւն, սուսաց պատմութիւն, հաշուապ հոթիւն, երկրաչափութիւն, և երգեցողութիւն:

Բացի կրօնից և հայերէնից մնացած բոլոր առարկաները աւանդուում են ռուսերէն:

Ներկայումս աշակերտների թիւը հասնում է 60 ի, որոնցից 20 հոգի գիշերօթիկ են: Այդ թւից 12 հոգի պահուում են դպրոցի հաշուով, 6 հոգի Գր. կազակեանի կտակով. (կտակել է 20 հազար ռուբլի) երկուսն էլ եզր. Ասատուրեանների կտակով:

Պանսիօնի վրա ծախսուում է 4000 ռուբլի:

Ազարարեան դպրոցը այժմ միանգամայն ապահով է: Նա քաղաքի կենտրոնում ունի մի անպիստուն, որը մինչև 20000 ռուբլի տարեկան արգիւնք է բերում:

Տարիների ընթացքում շարունակ դպրոցի վարիչների զբաղմունքի առարկան է եղել դպրոցի բարեփոխութեան հարցը, որովհետեւ այդ կերպ պահել և շարունակել դպրոցը անկարելի է:

Ութ, ինը տարւայ ընթացքում, երբ կարելի է միջնակարգ դպրոց աւարտել, Ազարարեան դպրոցի աշակերտները քաշքշկով՝ հազիւ իրենց դպրոցն են աւարտում:

Չնայելով, որ Ազարարեան դպրոցը իր ժամանակին անսպասան գեր է խաղացել աստրախանցիների համար և գծար թէ գանւի Աստրախանի հայերի մէջ մէկը, որ աշակերտած շինի այդ դպրոցին, այնուամենայնիւ այսօր այդ դպրոցը վանում է իրենից աշակերտութեանը. գրա կենդանի ապացոյցը այն է, որ տարեցատարի աշակերտների թիւը նւագում է:

Եւ գա հասկանալի է, հնադարեան սխտեմի դպրոցը (уѣздное училище), որը համարեա միակն է ամբողջ Ռուսաստանում, իր յետամնաց ծրագրով և երկ-երկու տարւայ կուրսով չի բաւականացնում այժմեան աշակերտութեանը և անս այդ հանգամանքն է, որ շարունակ մտածել է տալիս հոգարարձութեանը բարեփոխելու դպրոցը, որը սակայն, անս տարիներ է, որ մնում է նոյն դրութեան մէջ:


Այս վերջին տարիները դպրոցը բոլորից իր հարիւրամեակը և չնայելով ընդհանուր ժողովներից մէկում որոշեց սօնել այդ պատմական դպրոցի 100 ամեայ յօրելեանը և հրատարակել նրա պատմութիւնը, որի առիթով և ընտրեց առանձին յանձնաժողով բայց մինչև օրս դպրոցի հոգարարձութիւնը այդ յօրելեանը սօնելու չի ձեռնարկում:

Մեր կարծիքով յօրելեանի կատարելը անհրաժեշտ է, որովհետեւ դպրոցը ունի 100 ամեայ պատմական անցեալ և նա հիմնել է այն ժամանակներում, երբ սակաւ էին հայ դպրոցներ և իրրե այդպիսին որոշ գեր է խաղացել մայրենի խօսքը և զիրը տարածելու գործում ինչպէս աստրախանցիների նոյնպէս և ընդհանրապէս հայերի մէջ:

Ս. ք. ԱՍԼԱՆԵԱՆ

1913 թ. հոկ. 3.





Լուսանկար Ն. Սուշայանի
Աստրախանի հայ թեմական դպրոցի շէնքը

ԱՍՏՐԱՒԱՆԻ ՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ

Յօդածին ճակատը դարգարող պատկերը ներկայացնում է Աստրախանի թեմական դպրոցի հոյակապ շէնքը, որի հիմնարկութեան միաբեր արձարձեցին նախկին առաջնորդներ Սուրենյան (ներկայ Վեհափառ Հայրապետը), Խորէն Ստեփաննէն, սակայն հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակիանին յաջողեց սրա հիմքը դնել 1896 թւի աշնանը:

Այս շէնքի կառուցման համար մինչև օրս ծախուել է մօտ 100,000 ռուբլի, որպիսի գումարի համարեա կէսը առանձին յանձնաժողովի միջոցով ժողովարարել է Աստրախանում, մի մասը յատկացւած է Աստրախանի եկեղեցիների դրամապոլիտներից, միւս սուտը մասն էլ պարտք է վերցրւած Աստրախանի թեմի հայ եկեղեցիներից, վերադարձնելու նպատակով: Այդ պարտքը ներկայումս համարեա վերադարձրւած է Աստրախանի մոմավաճառութեան հոգարարձութեան զուտ արդիւնքի տօկոսներից, որպիսի հոգարարձութեան հիմքը դրեց նոյն Արիստակէս արձին իր բն հաստատուն աղբիւրներից մէկը թեմական դպրոցի պահպանութեան համար:

Հիմնարկութեան օրից շատ շանցած, շէնքն արդէն պատրաստ էր, սակայն դպրոցի բացման իրաւունքը ուշանում էր: Մինչև անգամ հասարակութիւնը դժգոհում էր, որ անգիրն շէնքը տարիներ մնում է դատարկ, սոսնց շահագործելու:

Վերջապէս 1906 թւի յուլիսի սկզբներին ստացւեց բացման իրաւունքը: Թեմակալ առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսը նալչիկ քաղաքից հեռագրեց Աստրախանի կոնսիստորեային—Ծխականներին ընտրել տալ մի տարով ժամանակաւոր յանձնաժողով, բանալու թեմական դպրոցի առաջին երկու նախակրթարանները:

Աւետարել հեռագիրը կայծակի արագութեամբ տարածեց քաղաքում և ցնցեց ամենքին: Նոյն թւի յուլիսի 19 ին Աստրախանի ծխական ժողովը ընտրեց եօթ հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որոնք և իսկոյն ձեռնարկեցին դպրոցի բացման գործին:

Գնւեցան և պատէր տրւեցան դպրոցի առաջին կահկարասիները, նստարաններն և այլն: Ծանուցու-

նորի, տեղական և թիֆլիսի հայ լրագրների միջոցով յայտարարեց քաղաքի և Աստրախանի թեմի հայ հասարակութեանը թեմական դպրոցի բացումը:

Աշակերտների ընդունելութիւնը նշանակեց օգոստոսի 1-ից և ընդունելութեան քննութիւնները նոյն օգոստոսի 25-ից մինչև բացման նախընթաց օրը:

Աւանդելի առարկաները որոշեցան՝ կրօն, հայոց լիզու, սուսաց լիզու, թւարանութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն, երգեցողութիւն:

Կազմեց առաջին երկու նախակրթարանների 1906—7 ուսումնական տարւայ նախահաշիւը, ընդամէնը՝ 3980 ռուբլի:

Նախահաշի հաստատութիւնը ունենալուց յետ, յանձնաժողովը ուսուցչական խումբ կազմակերպելու ձեռնարկեց և մինչև սեպտեմբերի 1ը կազմեց ուսուցչական խումբը վեց հոգու բաղկացութեամբ, որոնց թւումն էին նաև աւագ ուսուցիչն և վերակացուն:

Սրանցից չորսը հրաւիրեցան դրսից և երկուսը տեղացիք էին:

Հէնց առաջին տարւայ սկզբում դպրոց ընդունւեցան 75 աշակերտ, որոնք տեղաւորւեցան առաջին նախակրթարանում 47 աշակերտ և երկրորդ նախակրթարանում 24 և դուրս գնացին 4 աշակերտ:

Աշակերտների մեծ մասը աստրախանցիներ էին և փոքր մասը աստրախանաբնակ օտարականներ, դրսից բերւած էին միայն 2 աշակերտ: Դպրոցի գիշերօթիկների կացարանը պատրաստ չլինելու պատճառով աշակերտները բոլորն էլ երթեկ էին: Ուսումը ձրի էր: Աշակերտներից մեծագոյն մասը չքաւոր դասիցն էր—ձառայողների, գործակատարների և արհեստաւորների որդիք:

Երբ այդպէս ամէն ինչ պատրաստ էր, թեմական դպրոցի բացումը տեղի ունեցաւ 1906 թւի սեպտեմբերի 8-ին:

Բացումը հանդիսաւոր էր: Ամբողջ մեծ դահլիճը զարդարւած էր կանաչով և արևադարձային բոյսերով:

Ճաշ պատարագից յետ հոգևորականութիւնը եկեղեցական թափօրով և երգեցողութեամբ ներս մտաւ և ժողովրդի խումբն բազմութեան ներկայութեամբ օրհնեց շէնքը:

Ներկայ էր և հիմնադիր Արիստակէս եպիսկոպոսը, սակայն նա այս անգամ իր վերջին օրերն էր սպրում: Նա հազիւ բարձրացաւ ամբիօն և այնքան թոյլ էր, որ նրա վերջին խօսքերը անլսելի մնացին ընդարձակ դահլիճում: Նա գնաց թիֆլիս և այլ ևս չվերադարձաւ:

Զարմանալի է, կարծես այդ մարդը իր հետ տարաւ և իր դպրոցի բազղը: Այնուհետև այլ ևս նախարարութիւնից թոյլ չարեց բանալ դպրոցի յաջորդ դասարանները և կազմակերպւած գործը, թուլացաւ, ընկաւ և նրա հետ կապւած յոյսերը սնչացան:

Ներկայումս՝ բացումից 6—7 տարի անցնելուց յետ նոյն երկու նախակրթարանն է մնացել և աշակերտների թիւը իջել է մի խոցուէկ թւի—12, որոնք տեղաւորւած են մի դասարանում՝ երկու բաժանմունքով և կառավարւում են երկու ուսուցչով:

Եթէ դպրոցի մի այդպիսի կիսամեռ գրութիւնը տանում է հասարակութիւնը, և յանձնաժողովը գիտ նրա գոյութիւնը պահպանում է, առիթը այն ակնկալութիւններն են, որ սպասուում է Էջմիածնի գիմուսիներից

նախարարութեանը և հասած լուրերը հաւատացնում են, որ թեմական դպրոցի ընդարձակման յոյսերը պատկեկու մօտ են:

Մինչև թեմական դպրոցի բացման իրաւունք ստանալը, ներկայումս այդ շէնքումն են տեղաւորւած թեմական դպրոցի երկու նախակրթարանները, Կոնսիստորեան, Գրական-Փեղարեւստական ընկերութիւնը, Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը, նոյն ընկերութեան կար ու ձևի դպրոցը, Որբանոցը, և Մումա՝ վաճառութեան հոգարարձութիւնը:

Գ. ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

5 հոկ.



Լուսանկար ն. Սուջայեանի

Աստրախանի Հայ Գրական-Փեղարեւստական ընկերութեան գահյիճը

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ-ՓԵՂԱՐԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Աստրախանի Հայ Գրական-Փեղարեւստական ընկերութիւնը հիմնուել է 1908 թւի հոկտեմբեր ամսին, որի հիմնարկութեան միտքը պատկանում է տիկ. Մարիանէ Սօրոկեանին և ուրեմն մօտ օրերս լրացել է ընկերութեան գոյութեան հինգամեակը:

Այդ հինգ տարւայ ընթացքում ընկերութիւնը Աստրախանի Հայ կեանքում կատարել է որոշ կուլտուրական գեր, որի շարքը պարզեկու համար, պէտք է ծանօթանալ այդ ընկերութեան հինգամեայ գործունէութեան հետ: Այդ գործունէութիւնը եղել է երեք ուղղութեամբ. գրական, երաժշտական և գրամատիքական:

Գրական գործունէութիւնը կայացել է հերթական գրական երեկոնների կազմակերպման մէջ: Այդ երեկոններում կարգապէս են մեր առաջնակարգ գրողների գրածքները և այդ առիթով եղել են վիճարանութիւններ: Հերթական երեկոնները եղել են ամեն շաբաթ, թէպէտ եղել են զէպքեր, երբ չեն կայացել զանազան հանգամանքների պատճառով, բայց այնուամենայնիւ հինգ տարւայ ընթացքում ընկերութեանը յաջողել է կայացնել հարիւրից աւելի հերթական—գրական երեկոններ:



Բ Ա Ֆ Ֆ Ի

Այդ երեկոններից մի քանիսը ներքաճ են եղել մեր յայտնի գրողներին՝ Ս. Նազարեանին, Նալբանդեանին, Արտիկանին, Գամառ-Քաթիպային, Շահաղիզին, Բաֆֆիին, Պոռհանին, Շիրանդաղէին, Ծատուրեանին, Լէօին, Սունդուկեանին, Յովհաննէս Յովհաննէսեանին, Աղայեանին և Արասխանեանին:

Այդպիսի երեկոններում կարգապէս են քննարկուաներ որոշ գրողներին վերաբերեալ և կտորներ նրանց գրածքներից: Գրամատիքական երեկոնները եղել են կազմակերպւած երկու տեսակ. ա) հերթական երեկոններում գրական մասից յետոյ եղել է մի գործողութեամբ պիեսա կամ բ) կազմակերպուել են ներկայացումներ:



Ալէքսանդր Ծատուրեան

Այդպիսի երեկոներ ընկերութիւնը ունեցել է մօտ 25—30:

Պրեսաներից զբւել են հետեւեալները՝ «Մարտոզ ճրագներ», «Ապահարդան», «Բազմասար—ազրար», «Թագի համար», «Պէպօ», «Սկապէնի արարքները», «Վերածնւածը», «Գրեթոզ հնչիւններ», «Շուշանիկ» և այլն:



Լ Է Օ

Ընկերութիւնը ունեցել է նաև երկու գրական դաս, նախաձեռն յայդ պիեսների հերոսների բնորոշման:

Ներկայացումների յաճախ դնելուն եղել են մի քանի խոշոր խոչընդոտներ, որոնք բարեբաղդարար այժմ վերացած կարելի է հաշուել:




Յ. Յովհաննէսեան

Երաժշտական երեկոները ընկերութիւնը, ինչպէս և գրամատիքականները, ունեցել է երկու տեսակի, ա) հերթական երեկոներում գրական մասից յետոյ եղել է դիվերտիսմենտ, որը բազկացած է եղել երգից,

նւագածութիւնից և զեկլամացիայից. բ) եղել են մեծ համերգներ:

Առաջինների թիւը հասնում է մօտ 40 ի, իսկ երկրորդինը՝ մօտ 10-ի:

Այդ երաժշտական երեկոներում կատարել են թէ հայ, թէ օտար հեղինակների երաժշտական գրւածքները, իսկ զեկլամացիան միայն եղել է հայերէն:



Շիրանգաղէ

Ընկերութիւնը կազմակերպել է նաև մի քանի անգամ մեծ երեկոյթներ Վարդանանց տօնի յիշատակին նախաձեռն, որոնց ծրագիրը եղել է—բեֆիրատ տօնի առիթով, մենախօսութիւն կամ նոյն իսկ տեսարան, նւագածութիւն, երկեցողութիւն և կենդանի պատկերներ:



Աւետիս Ահարոնեան

Այս տարւայ գարնանը ընկերութիւնը ունեցիւ է և իւր փոքրիկ տօները—տուաջին՝ հայ գրամատիքական խմբի գալուստն էր, այդ հայ գեղարուեստի տօնն էր. իսկ երկրորդը՝ բանաստեղծ Ա. Ծատուրեանի, դա հայ գրականութեան տօնն էր Աստրախանում:

Ընկերութիւնը իր գահլիճում ընդունեց թէ գրամատիքական խումբը և թէ Ա. Ծատուրեանին:

Երկու դէպքումն էլ ներկայ էին Աստրախանի հայ հասարակութեան ներկայացուցիչները՝ մասնաւորապէս հայ ինտելիգենցիան:

Մեզ՝ բոլորիս մէջ այդ երկու դէպքը թողել է ամենալաւ յիշողութիւններ:

Վերջապէս հոկտեմբերի 19 ին ընկերութիւնը ընդ տուաջ է գնացել հայ հասարակութեան ցանկութեանը՝ մի մեծ հանդէսով, հայ տաների 1500 ամեայ և հայ տպագրութեան 400 ամեայ յօբելիանները տօնելու:

Այդ հանդէսը նախ պէտք է հետաքրքիր լինի իր ծրագրով, որը տպւած է ներկայ ժողովածուի մէջ և երկրորդը՝ իր արտաքինով:

Ընկերութիւնը հանդէսի համար ունի իր տրամադրութեան տակ Աստրախանի թեմական դպրանոցի սէնեակներին թւով 7, սրանցից երկուսը—մեծ դահլիճներ պէտք է զարդարւած լինեն հայկական տեսարաններով:

Առանձին սենեակներ յատկացրած են հայ մամուլին, հայ գրականութեան, հայ երգերին ու պարերին:

Կովկասից գալիս են հայ աշուղներ և սազանգարներ և վերջապէս ընկերութեան վարչութիւնը այդ օրը հրատարակում է յատուկ դրա համար հրաւիրւած խմբագրական մասնաժողովի աջակցութեամբ ներկայ ժողովածուն, նւիրւած այդ երկու մեծ յօբելիաններին:

Ահա այն բոլորը, ինչոր կարողացիւ է ընկերութիւնը անել այդ հինգ տարւայ ընթացքում:

Ռ. ԱՍՏԻԱԾԱՏՐԵԱՆ



Լուսանկարներ Ն. Սուջայեանի



Աստրախանի հայ Գրական-Գեղարուեստական Ընկերութեան գահլիճը հոկտեմբերի 19-ի յօբելեանական երեկոյթին

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Վարչութեան խօսքը	3 հրես
Ս. Մեսրոպը Գ. քահ. Մկրտումեան	4 „
Ս. Սահակ 	6 „
Օշական. Ա. Բունեսթեանց	7 „
Հայ տպագրութեան չորսնորիւր ամեակը—Գ. քահ. Քարտաշեան	8 „
Հայ գրի և գրականութեան նշանակութիւնը—Ս. քահ. Ասլանեան	11 „
Մեծ վարժապետը (Բանաստեղծութիւն)—Գ. քահ. Մկրտումեան	12 „
Նախնի հայոց գրի և գրականութեան շուրջը—Ս. Ղամարեան	„ „
Հայոց լեզուի մեծ վարժապետը—Ա. Բունեսթեանց	14 „
Մայրենի լեզու (Բանաստեղծութիւն)—Գ. քահ. Մկրտումեան	15 „
Նոր ուղղագրութիւն—Մի հնչիւնին մի գրութիւն—Թոմաս	16 „
Նւէր տառերի գիւտի հեղինակին (Բանաստեղծութիւն)—Առաքել Բունեսթեան	17 „
Հայերէն բուկվաների պրագմտիկը (Աստրախանի բարբառով)—Գէ-Բես	18 „
Գրի ու տպի յօրհիւանը (Ալէքսանդրապօլի բարբառով)—Ազէքսանդր Սանօյեան	19 „
Աստրախանի անդրանիկ «Լրարեր» հայ շարաթաթերթը— Գ. քահ. Մկրտումեան	20 „
Յիշողութիւններ—Արէլ Ապրեսեան	22 „
Աստրախանի առաջին հայ տպարանը—Գ. քահ. Մկրտումեան	23 „
Աստրախանի ծխական կեղեցական դպրոցը—Ն. քահ. Իլիազեան	24 „
Աստրախանի նախկին հայ օրիորդական դպրոցը—Ս. Ղամարեան	„ „
Աստրախանի հայոց արհեստական դպրոցը—Ս. Ղ.	25 „
Աղարարեան դպրոցը—Ս. քահ. Ասլանեան	26 „
Աստրախանի հայ թեմական դպրոցը—Գ. քահ. Մկրտումեան	27 „
Աստրախանի հայ Գրական-Գեղարւեստական ընկերութիւնը—Ռ. Ասաւաձատրեան	28 „

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

- Ս. Մեսրոպը
- Ս. Սահակ
- Ս. Մեսրոպի գերեզմանը
- Արգար դպրի տպագրա՝ Սաղմոսի մէկ էջը
- Ստեփաննոս Նապարեան
- Միքայէլ Նալբանդեան
- Սաչատուր Արովեան
- Ղազարոս Աղայեան
- Ռաֆայէլ Պատկանեան (Գամառ-Քաթիպա)
- Գարրիէլ Սունդուկեան
- Պերճ Պոռշեան
- Աստրախանի անդրանիկ հայ լրագիր «Լրարեր»ի առաջին համարը
- «Մեր կեանքը» շարաթաթերթը
- Գրիգոր Արծրունի
- Աստրախանի առաջին հայ տպարանի և նախկին հոգևոր-ծխակ դպրոցի շէնքը
- „ նախկին օրիորդական դպրոցը
- „ հայ արհեստական դպրոցը
- „ Աղարարեան դպրոցը
- „ հայ թեմական դպրոցը
- „ Գրական-Գեղարւեստական ընկերութեան գանձիչը
- Բաֆֆի
- Ալէքսանդր Ծատուրեան
- Լէօ
- Շիրվանզադէ
- Յ. Յովհաննէսեան
- Աւետիս Ահարոնեան
- Գրական-Գեղարւեստական ընկերութեան գանձիչի երկու տեսարան հակամբերի 19-ի յօրհիւանական երկկոյթին:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՈԿՏ, 19 ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՅԹԻ

I

- 1. Հայ տառերի գիտար մեծ տօնը.—(ընթերցան) Ս.ք. Ասլանեան:
- 2. Աղօթք կկատարէ խումբը
- 3. Ճանապարհորդական տպաւորութիւններ (Ալէքսանդրոպօլի բարբառով)—
կկարդայ պ. Մարտիրոսեան:
- 4. «Հաստի ձեռատետրից» — (պօլսի բարբառով) կկարդայ պ. Ա. Ապրիսեան:
- 5. «Պէտքից» մի հատուած—(Թիֆլիսի բարբառով) կկարդայ պ. Գ. Սաղաթեան:
- 6. Հայկական մեղեդիներ Խպօլիտով-Իվանովի կ'նուագէ ջութակի վրա պ. Ե. Ազատեան:
- 7. «Ալտրան ևս հագել».—հայ ժողովրդակ. երգ կկատարէ խումբը
«Աձրեն եկաւ»

II

- 1. «Եղսան ջան» —Ռ. Գեմալեանի կկատարէ խումբը:
- 2. «Մի փայլուն աստղ» կկատարէ սազան-
դարների խումբը զե.
«Թե անէի զուշ էղնէի» կատարութեամբ պ.
Գօրգորի
- 3. Շիրանդաղէի «Նամուս»ից—(Շամախու բարբառով)—կկարդայ պ. Ա. Ապրիսեան:
- 4. Փորսուղին Աւագը—(Ն.Նախիջևանի բարբառով)—կկարդայ պ. Գ. Մելքիսեղէկեան:
- 5. Ինչ կցանես էն կ'հնձես—(Արարատեան բարբառով)—կկարդայ պ. Գ. Բարսեան:
- 6. «Պատու կնկայ հեթեաթը»—(Ղարաբաղի բարբառով)—կկարդայ պ. Ս. Սարգսեան:
- 7. Մաճկալ կկատարէ սազան-
դարների խումբը
- 8. «Այ մարալ աղջիկ» —Արդաշեսանի կկատարէ խումբը:

III

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԵՐ

- 1. Լէպ ճօ լէյ կկատարէ խումբը:
- 2. Նունուֆար կկատարէ տ. Մարտիրոսեան:
- 3. Չամբար (խմբական պար) կկատարէ խումբը:
- 4. Լեզգինկա կկատարեն օր. Գարբիէլեան և պ. Սարգսեան:
- 5. Ալու ալիան խմբական պար:
- 6. Ուզունդարա կկատարէ տ. Սարգսեան:
- 7. Բեօր-օղլի
- 8. Գիւլ պար խմբական պար:

Հայկական երգեր, կ'կատարէ խումբը պ. ԼԵՒՍԱՆԵԱՆԻ ղեկավարութեամբ:

Վ Ե Ր Զ Է Պ Ա Ր Ե Ր

Սկիզբը ուղիղ 9 ժամին: Պարերի սկիզբը 12 ժամ

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ռամանաս Աստուածարեան (նախագահ)
 Գէորգ Սուլիսեան (փոխ-նախագահ)
 Սարգիս ք. Ասլանեան (քարտուղար)
 Արէլ Ապրիսեան (գանձապահ)
 Արշակ Լիսանեան
 Գալուստ ք. Բարսեղեան } անդամներ:



